

**«ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ»**  
**սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**

---

Արագածավան գյուղում սառնարանային տնտեսության կառուցում  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ**  
**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**



Կատարող՝  
«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝



Վոամ Թևոսյան

Երևան-2024թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	4
1. ՕՐԵՆՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ .....	6
1.1. ՇՄԱԳ-ի մեթոդոլոգիան .....	7
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան .....	9
2. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԱ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ԱԶԴԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԸ և ԴՐԱՆՑ ՏԵՂԱԴԻՐՔՆ ԱՐՏԱՑՈԼՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄՆԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ ԿԱՄ ՔԱՐՏԵԶԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ .....	10
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	13
3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները .....	13
3.2. Շրջանի երկրաբանական պայմանները .....	13
3.3. <i>Սեյսմիկ պայմանների բնութագիր</i> .....	15
3.4. Կլիմայական պայմանները .....	16
3.5. Օդային ավազան .....	19
3.6. Ջրային ռեսուրսներ .....	19
3.7. Հողածածկ .....	22
3.8. Կենսաբազմազանություն .....	23
3.8.1. <b>Բուսական աշխարհ</b> .....	23
3.8.2. <i>Կենդանական աշխարհ</i> .....	24
3.8.3. <b>Վրանգված էկոհամակարգեր, բնության հարուկ պահպանվող տարածքներ</b> .....	25
3.9. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ .....	26
4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....	27
4.1. Մարզի սեցիալ-տնտեսական բնութագիրը .....	27
5. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ .....	29
5.1. Զրոյական տարբերակ .....	29
5.2. Քննարկվող տարբերակներ .....	29
6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ) .....	30
6.1. Ընդհանուր տեղեկատվություն .....	30
6.2. Հիմնական տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները .....	31
6.3. Նախապատրաստական աշխատանքներ .....	33
6.4. Ծինարարական աշխատանքների բնութագիրը .....	35
6.4.1. <b>Ջրամալարարարման և ջրահեռացման համակարգը</b> .....	35
6.4.2. <b>Ավրոմար հակահրդեհման համակարգ</b> .....	36

6.4.3. <b>Էլեկտրատեխնիկական համակարգ</b> .....	36
6.4.4. <b>Հակահրդեհային ազդարարման համակարգ</b> .....	37
6.4.5. <b>Օդափոխության համակարգ</b> .....	38
6.5. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում .....	38
6.6. Սառնարանային սարքավորումների տեխնիկական ցուցանիշները .....	39
7. <b>ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ</b> .....	40
7.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը .....	40
7.1.1. <b>Օդի աղտոտում</b> .....	40
7.1.2. <b>Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն</b> .....	41
7.2. Բնապահպանական միջոցառումների ծրագիր.....	41
7.2.1. <b>Մթնոլորտային օդ</b> .....	42
7.2.2. <b>Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում</b> .....	42
7.2.3. <b>Հողային ռեսուրսներ</b> .....	43
7.2.4. <b>Կենսաբազմազանություն</b> .....	44
7.2.5. <b>Սոցիալական միջոցառումներ</b> .....	45
7.2.6. <b>Թափոնների և այլ նյութերի կառավարումը</b> .....	45
7.2.7. <b>Աշխատանքի անվտանգություն և առողջություն</b> .....	47
7.3. Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմացումը շահագործման փուլում .....	48
7.4. Հանրային մասնակցություն .....	49
8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ .....	50
9. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.....	50
10. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ .....	52
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	53
Հավելված 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ.....	55
Հավելված 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ.....	59
Հավելված 3. Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք .....	60
Հավելված 4. Ճարտարապետահատակագծային առաջադրանք .....	61
Հավելված 5. Անշարժ գույքի պետական գրանցման վկայական.....	66
Հավելված 6. Հողամասի հատակագիծ.....	68

**Նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.**

Նախատեսվող գործունեության	Արագաձավան գյուղում սառնարանային տնտեսության կառուցում
Նախատեսվող գործունեության նպատակը	Սառնարանային տնտեսության հիմնում
Պատվիրատու	«ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊԸ
Նախաձեռնող	«ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊԸ
Նախագծային կազմակերպություն	«Երջանիկ Ղազարյան» ԱԶ, «Արքիպլատֆորմ» ՍՊԸ
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ. փոստ,	Հեռ.՝ + 37498 841 011 Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան փողոց, շենք 20, Տնօրեն՝ Էդգար Սիսակյան Էլ. հասցե՝ <a href="mailto:edgar.sisakyan@vrfruit.com">edgar.sisakyan@vrfruit.com</a>
Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը	Արագածոտնի մարզ, Թալին համայնքի Արագածավան գյուղի 1 հողամաս հասցե
Նախատեսվող աշխատանքներ	4,20988 հա հողամասում սառնարանային տնտեսության շենքի կառուցապատման մակերեսը 9645 քմ է:

**ՆԵՐԱ  
ԾՈՒ  
ԹՅՈՒ  
Ն**

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

«ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊ ընկերությունը դեռևս 2016 թվականից զբաղվում է այգեգործական տնտեսությամբ: Ուսումնասիրելով Հայաստանում այգեգործության, տեղական արտադրանքի խթանման հնարավորությունները՝ ընկերությունն ունի եվրոպական նորարարական սկզբունքներով և տեխնոլոգիաներով ստեղծված տանձի, խնձորի, կեռասի, ծիրանի ինտենսիվ պտղատու այգիներ:

Մրգի երկարատև պահպանման նպատակով «ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է սառնարանային տնտեսության հիմնում: Այդ նպատակի համար Արագածոտնի մարզի, Թալին համայնքի Արագածավան գյուղի 1 հողամաս հասցեում (Կադաստրային ծածկագիրը՝ 02-016-0250-0048, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ վարելահող, այլ հողատեսք, գյուղատնտեսական արտադրական օգյեկտների) Ընկերության կողմից նախատեսվում է սառնարանային տնտեսության կառուցում:

Նախատեսվող գործունեության համար սկզբնական շրջանում իրականացվելու է ընկերությանը պատկանող պտղատու այգիներից ստացված բերքի՝ մթնոլորտի կարգավորման հնարավորությամբ հագեցված պահեստավորում: Տարածքի հարևանությամբ է գտնվում պտղատու այգիներ, գյուղատնտեսական նշանակության հողեր: Սառնարանային տնտեսությունը նախատեսվում է գյուղատնտեսական ապրանքների՝ միայն մրգերի պահման համար: Մրգերը կարող են պահվել երկարաժամկետ /խնձոր/ և կարճաժամկետ /սալոր, ծիրան/: Այս տեսակները ախնական պայմանավորվածության հիման վրա են նախատեսվել, հետագայում պահվող տեսակների ցանկը կարող է փոփոխվել:

Գործունեության իրականացման համար օգտագործվելու են «ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողերը: Տարածքը զուրկ է շենք շինություններից և կառույցներից: Շինարարական աշխատանքների իրականացմանը խոչընդոտով ծառաթփային բուսականությունը բացակայում է: Կառուցապատվող հողամասի հարևանությամբ մասնավոր և համայնքային հողեր են, գոյություն ունեն ասֆալտապատ և գրունտային ճանապարհներ:

Ծրագրի իրականացումը խթան կհանդիսանա համայնքի կենսամակարդակի բարելավման և գյուղատնտեսական արտադրության զարգացման համար:

Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել.

- ✓ նախագծման թույլտվությունը
- ✓ գեոդեզիական հանույթը՝ իրականացված նախագծային կազմակերպության կողմից,
- ✓ ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները՝ իրականացված նախագծային կազմակերպության կողմից,
- ✓ տարածքի կլիմայական բնութագիրը,
- ✓ Թալինի համայնքապետարանի համապատասխան մասնագետների հետ համատեղ կատարած ուսումնասիրությունները և վերջիններիս հետ հետագա վերլուծությունը:

Սառնարանային տնտեսության աշխատանքային նախագծի հիման վրա գործունեության իրականացման համար ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան մշակվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրության և հիմնական գնահատման սույն փաստաթուղթը: Այս փաստաթուղթը ներառում է ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները և չափանիշները, ԲԿՊ-ի և Մոնիթորինգի պլանի իրականացման ընթացակարգերը՝ գործունեության իրականացման բոլոր փուլերում:

# 1. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից: Դրանցից հիմնականներն են (կատարված փոփոխություններով և լրացումներով)

- ՀՀ Հողային օրենսգիրքը
- ՀՀ Ջրային օրենսգիրքը
- ՀՀ Անտառային օրենսգիրքը
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2005)
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը (1998)
- ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 2014 թ-ի հունիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 781-Ն որոշումը:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը
- ՀՀ կառավարության 2008թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն որոշումը
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը
- «Թափոնների մասին» ՀՀ օրենքը
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» ՀՀ օրենքը
- ՀՀ կառավարության 2011թ-ի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 1396-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 2017թ-ի նոյեմբերի 2-ի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշումը

- ՀՀ կառավարության 20 հունվարի 2005 թվականի N 64-Ն «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» որոշումը
- ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1059-Ա «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» որոշումը
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը
- ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոններ և նորմերի պահանջները
- ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:
- ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից
- ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրամանը:

*Միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ.*

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա
- (CITES) (Վաշինգտոն)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)

**1.1. ՇՄԱԳ-ի մեթոդոլոգիան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023) գործողությունը տարածվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության, անդրսահմանային ազդեցություն ունեցող

հիմնադրույթային փաստաթղթի նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, շահագրգիռ հանրության ծանուցման, հանրային լուսմների գործընթացների, պետական փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու և այդ գործընթացներին մասնակցող անձանց վրա:

«ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող սառնարանային տնտեսության /պահեստային շենքի/ կառուցման գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը (այսուհետ՝ ՇՄԱԳ) և ՇՄԱԳ հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) օրենքի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023), ինչպես նաև Օրենքից բխող և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023) 12-րդ հոդվածով սահմանված դասակարգումների «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է և ենթակա է շրջակա միջավայր վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ-ն իրականացվել է «ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊ ընկերության կողմից, որը հանդիսանում է որպես նախաձեռնող: ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությունը սահմանվել և կազմվել է վերը նշված օրենքի պահանջներով՝ հաշվի առնելով նախագծային փաստաթղթով նախատեսված ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները:

ՇՄԱԳ փուլում իրականացվել են հետևյալ գործընթացները.

1) գնահատվել է նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա.

2) Բացահայտվել և հիմնավորվել է նախատեսվող գործունեության՝ նախագծային փաստաթղթով նախատեսված լուծումների այլընտրանքային տարբերակները, ներառյալ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, և գնահատվում է դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի, սոցիալ-տնտեսական վիճակի վրա.

3) մշակվել է բնապահպանական կառավարման պլան և շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման ծրագիր՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու կամ բացառելու նպատակով.

4) հաշվի է առնվում ազդեցության աստիճանը՝ հիմք ընդունելով ազդեցության ենթակա տարածքի աշխարհագրական դիրքը, բնակչության թիվը, ազդեցության հավանականությունը, աստիճանը, տևողությունը և կանխատեսվող ազդեցությունների հնարավոր գումարային ամբողջական աստիճանը.

5) հաշվի է առնվել նախատեսվող գործունեության տարածքում այլ գործունեությունների իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը:

Գնահատումն իրականացնելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների, այդ թվում՝ ազդակիր համայնքի ղեկավարների, շահագրգիռ հանրության ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները:



Վերը նշված գնահատման արդյունքով նախաձեռնողի կողմից կազմված ՇՄԱԳ հաշվետվությունը պետք է ներկայացվի շրջակա միջավայրի նախարարություն՝ փորձաքննության:

Որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ նախատեսվող սառնարանային տնտեսության ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներն են՝

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.

3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում.

6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.

8) հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը:

ՇՄԱԳ աշխատանքներում հաշվի են առնվել տեղանքի ինչպես բնապահպանական, այնպես էլ սոցիալական ելակետային տվյալները, գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքի և նյութերի վերաբերյալ տվյալները:

## **1.2. Նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.**

Սառնարանային տնտեսության կառուցումը որպես նախատեսվող գործունեություն, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023) 12-րդ հոդվածով սահմանված դասակարգումների դասվում է որպես «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայր վրա ազդեցության գնահատման և փորձաքննության 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով: Այն է՝ «քաղաքաշինության բնագավառում՝ ա. քաղաքաշինական գործունեության

օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»:

**2. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԽ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ԱԶԴԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԸ և ԴՐԱՆՑ ՏԵՂԱԴԻՐՔՆ ԱՐՏԱՑՈԼՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄՆԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ ԿԱՄ ՔԱՐՏԵՉԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԿՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ**

Հողամասը գտնվում է Թալին համայնքի Արագածավան գյուղի 1 հողամաս հասցեում: Իրենից ներկայացնում է չկառուցապատված տարածք: Դեպի հողամաս մուտքն ապահովվում է գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհներով: Հողամասին կից առկա է էլեկտրահաղորդման գիծ: Հողամասին կից մասնավոր և համայնքային հողեր են:

Աշխատանքային նախագծով նախատեսված է կառուցել սառնարանային պահեստային տարածք ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, գ. Արագածավան, 1 հողամաս հասցեում /կադաստրային ծածկագիրը՝ 02-016-0250-0048/: Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթերն են՝ հողամասի վկայականը /N 21062023-02-0087, գաղտնաբառ՝ BRLMNS2TNLAV/, նախագծման թույլտվությունը՝ N37 տրվ. 14.06.2023թ, պատվիրատուի առաջադրանքը, համայնքի ղեկավարի 07.06.2023թ. թիվ 656-Ա որոշումը:

Սառնարանային տնտեսության կառուցապատման համար հատկացվող հողամասի /որի մակերեսի չափը 4.209857 հա է/, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահող, այլ հողատեսք /գյուղատնտեսական արտադրական օբյեկտների/: «ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊԸ-ին հողամասը հատկացված է սեփականության իրավունքով: Ճարտարապետական լուծումները՝ թե՛ էքստերիերում, թե՛ հատակագծային լուծումներում ուղղված են ֆունկցիոնալ պահանջները հոգալու համար:

Կառույցը իրենից ներկայացնում է՝ երկու խոշոր, երկու միջին և ևս հինգ կոնստրուկտորական լուծումներով բլոկների համադրություն: Ընդհանուր կառուցապատման մակերեսը 9.645 մ<sup>2</sup> է, հաշվարկված է 18 ամսվա շինարարության տևողություն, այդ թվում 1 ամիս՝ նախապատրաստական աշխատանքներ:


Սառնարանային պահեստային շինությունը տեղակայված է հողամասի ճակատային հատվածից (Ճանապարհից) 38մ հեռավորության վրա, մասնավոր կոնստրուկտիվ տարրեր՝ 29մ:

ԻՐԱՂՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻՏ


(Վարկային 1:200)



Նկար 1. Իրադրության հատակագիծ



Նկար 2. Իրավիճակային սխեմա



Նկար 3.

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝

- հյուսիսային լայնության - 40° 20.555'N
- արևելյան երկայնության - 43° 37.210'E

Հայցվող տարածքը եզրագծվում է ARM WGS-84 համակարգի հետևյալ կոորդինատներով՝

Հողամասի			
Երջարարմային (քեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	8382710.6739	4468447.4044	88.11
2	8382682.8814	4468531.0175	
3	8382651.2111	4468623.9649	98.19
4	8382648.6502	4468630.7861	7.29
5	8382851.7788	4468661.9261	205.50
6	8382920.6512	4468672.4842	69.68
7	8382929.8850	4468668.3310	10.12

### 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

#### 3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արագածոտնի մարզի, Թալին խոշորացված համայնքի Արագածավան գյուղում: Գյուղը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին, մարզկենտրոն Աշտարակից 75 կմ, Երևանից 80 կմ հեռավորության վրա:

Արագածավանը սահմանակից է Թուրքիային Ախուրյան սահմանային գետով՝ 20 կմ երկարությամբ: Ծովի մակերևույթից բարձր է 1250մ: Նախատեսվող գործունեության տարածքից մոտակա բնակելի շենքը գտնվում է մոտավորապես 3կմ (Արագածավան գյուղ) հեռավորության վրա:

Ստորև ներկայացվում է տարածքի իրադրային սխեման և իրավիճակային հատակագիծը:



Նկար 4. Տարածքի քարտեզ-սխեմա

#### 3.2. Շրջանի երկրաբանական պայմանները

2023 թվականին նախատեսվող գործունեության տարածքում կատարվել է ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություն: Ըստ հորատման, ֆոնդային նյութերի և տարածաշրջանի մանրամասն տեղազննման շրջանի երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը՝ հրաբխային վերին պալեոգենյան գործունեությունն է, որի հետևանքով ձևավորվել սարահարթը:

**Գեոմորֆոլոգիական տեսակետից** տեղազննվող տարածքը ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որին բնորոշ է լավաներով ծածկված

սարավանդներով և ձորակներով կտրտված լանդշաֆտը: Ուսումնասիրվող տարածքը կազմված է մի շարք միջին չորրորդական լավային հուպերով: Դրանցից մեկը տարածված է նաև տարածքի մատույցներում: Այս ապարները հիմնականում ծածկվում են, դեյուվիալ-պրոյուվիալ և էյուվիալ-դեյուվիալ առաջացումներով:

**Տարածքի երկրաբանական կտրվածքը** ուսումնասիրվել է ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երեք շերտ::

**Շերտ 1** Հողաբուսական շերտ ավազակավի, կավավազի լցոնումով: Շերտի հզորությունը 0.0-0.20մ է:

**Շերտ 2** Տարբեր ապարների խճավազա-մանրախճային նստվածքներ 15% գերազանցող կավավազային լցանյութով: Շերտի հզորությունը 0.20-1.3մ է:

**Շերտ 3** Հրաբխային-նստվածքային տարբեր ապարների թեթև գնդավորված խճաքարա-խճավազային նստվածքներ մոտ 10% բեկորանյութով, 10-15% խառնավազի լրացումով: Տեղ-տեղ հանդիպում են խոշորաբեկոր առաջացումների տեսքով: Շերտի հզորությունը 1.3-4.5մ է:

Համաձայն կատարված հետազոտությունների տեղամասում ստորերկրյա ջրերը ըստ ֆոնդային տվյալների մինչև 10.0մ խորությամբ չեն բացահայտվել և գտնվում են ավելի խորը հորիզոններում:



Ուսումնասիրվող տեղամասում գրունտները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

**Հիդրոերկրաբանական տեսակետից**, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ և ծակոտկենությամբ, ուստի շնորհիվ դրանց բնորոշ է բարձր ջրատարությունը: Ստորերկրյա ջրերի ձևավորումը կատարվում է մթնոլորտային տեղումների ներծծմամբ, իսկ կուտակումը լավատակ հնահուններում: Տվյալ տարածքում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 10.0մ-ից խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում, որոնք բացակայում են:

### **Սողանքներ**

Դիտարկվող տարածքում սողանքային երևույթները բացակայում են:



### 3.3. Սեյսմիկ պայմանների բնութագիր

Հայաստանի Հանրապետությունը տարածքը գտնվում է Եվրասիական և Արաբական լիթոսֆերային խոշոր սալերի բախման գոտում և այս հանգամանքով է բացատրվում տարածաշրջանի բարձր սեյսմիկականությունը:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի՝ 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»: Այդ նորմերով սահմանվում են այն չափանիշները, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/: Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար 300, 400 և 500 սմ/վրկ<sup>2</sup> է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Այդ ցուցակում դիտարկվող տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում:


2022 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղի 1 հողամաս սառնարանային տնտեսության նախագծվող տեղամասում, հիմնատակի գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման երկրաֆիզիկական աշխատանքները կատարվել են սեյսմիկ զոնդավորման եղանակով:

Գրունտների առաձգական հատկություններից կախված սպասվող առավելագույն հորիզոնական արագացումները հաշվարկելու համար, իրականացվել են գործիքային գրանցումներ գրունտների առանձին շերտերում, առաձգական ալիքների տարածման արագությունները որոշելու նպատակով: Գործիքային գրանցումներն իրականացվել են Ռուսաստանի Դաշնության արտադրության «Лакколит 24-M2» թվային սեյսմիկ կայանի և «Դելտա 3» սարքի միջոցով: Համաձայն 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝  $A_{max}=0,3g$  մինչև 9 բալ սեյսմիկայնություն /համաձայն Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի 1 հողամասի տարածքի ինժինեռաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության եզրակացության/:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 85սանտիմետր:

Այսպիսով ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ տվյալ տարածքում բացակայում են: Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ուսումնասիրվող տեղամասում գրունտները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Տեղամասում ստորերկրյա ջրերը ըստ ֆոնդային տվյալների մինչև 10.0մ խորությամբ չեն բացահայտվել և գտնվում են ավելի խորը հորիզոններում:

*Նկար 5. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վրանգի գոտիավորման քարտեզ*



**ՍԵՅՄԱՐԿ ԳՈՏՈՒՆԵՐ՝**  
 Գեղտնի սոցիալական արագացումների A  
 (ազատ անկման ց արագացման մասերով)  
 մեծություններով

	① A=0,3g
	② A=0,4g
	③ A=0,5g

### 3.4. Կլիմայական պայմանները

Արագածոտնի մարզի տարածքը հանրապետության ամենամեծ կլիմայական գոտին է և հանդիսանում է Հայկական բարձրավանդակի ցածրադիր և պարփակ մասերից մեկը: Կլիման չոր է, խիստ մայրցամաքային, բնորոշվում է սառը ձմեռներով և շոգ ամառներով, ինչպես նաև արևափայլի երկարատևությամբ (տարեկան՝ միջինը 2600 ժամ):

Ամսական միջին տեղումները կազմում են 10 մմ, հարաբերական խոնավությունը հաճախ լինում է 30%-ից ցածր: Ընդհանուր առմամբ տարածաշրջանում կլիման չափավոր ցամաքային է: Ձմեռները ցուրտ են, հաստատուն ձնածածկույթով: Ամառները շոգ են: Միջին տարեկան ջերմաստիճանը 8 °C, բաժարձակ նվազագույնը՝ -26°C, բաժարձակ առավելագույնը՝ 26°C: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 400-450 մմ:

Կլիմայական պայմանները ըստ ամիսների, բերված են ստորև ներկայացված աղյուսակներում ըստ «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2024 նորմատիվային փաստաթղթի: Կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող Թալինի օդերևույթաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները:

Համաձայն օդերևույթաբանական կայանի տվյալների ուսումնասիրվող շրջանի կլիման՝ չոր մայրցամաքային է, խստաշունչ ձյունառատ,բայց կարճատև ձմեռով և զով ամառով: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի անցնում 450 մմ-ից, միջին տարեկան խոնավությունը 66% է, բացարձակ առավելագույնջերմաստիճանը 37.5°C, բացարձակ նվազագույնը՝ 26.1°C: Կլիման չափավոր ցամաքային է, շոգ ու չորային ամառներով, չափավոր ցուրտ ձմեռներով: Ստորև ներկայացվում է շրջանի կլիմայական ցուցանիշները աղյուսակների տեսքով՝

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Թալինի օդերևույթաբանական կայանի տվյալների:



**Աղյուսակ 3.1 Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը**

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան °C	Բացարձակ նվազագույն °C	Բացարձակ առավելագույն, °C
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Թալին	-5.7	-4.1	1.0	7.5	12.3	16.7	20.8	21.0	16.7	10.2	3.3	-2.9	8.1	-26.1	37.5

**Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը**

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Թալին	77	75	69	66	66	60	55	52	54	63	73	78	66	77	73	52	44

**Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները**

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ		Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Թալին	23	25	37	60	77	51	35	22	20	36	25	23	434	133	301	
	21	22	38	36	37	63	58	44	27	36	22	19				63

**Աղյուսակ 3.4. Ձյան ծածկույթը**

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակ, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, մմ
Թալին	64	84	137	-

Աղյուսակ 3.5. Քամու պարամետրերը

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % / միջին արագություն, մ/վ ըստ ուղղությունների								Անդրորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսիսն, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-ձետրվար ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Թալին	Հունվար	29	9	13	27	11	3	3	5	50	1,5	ՀվԱրլ	3.2	ՀվԱրլ	2.9
		2.4	2.2	2.6	2.9	2.1	2.2	2.6	3.6						
	Ապրիլ	22	8	13	27	15	4	4	7	33	2.2				
		3.3	2.4	2.6	3.6	2.9	3.5	3.2	4.1						
	Հուլիս	31	8	9	25	12	3	3	9	36	2.2				
		3.5	2.6	2.4	3.2	2.4	2.7	2.7	4.1						
Հոկտեմբեր	31	9	10	22	15	3	3	7	42	1.8					
	2.9	2.2	2.4	3.0	2.2	2.8	2.7	3.9							

### 3.5. Օդային ավազան

Արագածավան բնակավայրի օդային ավազանի աղտոտվածությունը հիմնականում ձևավորվում է ավտոտրանսպորտային միջոցների, բնակչության կենսագործունեության և ընդերքօգտագործման գործունեության ազդեցության արդյունքում:

Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը հանրապետության տարածքում վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից: Սակայն, Արագածավան բնակավայրում չկան մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Էկոմոնիթորինգի դիտակետեր և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով ըստ բնակչության թվաքանակի:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանի աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՊՈԱԿ-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նուլեցույց<sup>1</sup>: Ըստ այդ նուլեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են:

Փոշի՝ 0.071 մգ/մ<sup>3</sup>;

Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ<sup>3</sup>;

Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ<sup>3</sup>;

Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ<sup>3</sup>:

### 3.6. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

<sup>2</sup> ՀՀ բնապահպանության նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» նուլեցույց-ձեռնարկ: Երևան-2011

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

Գործունեության տարածքը ներառված է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Համաձայն ՊՈԱԿ 2022 թվականի ամփոփագրի Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև, Գյումրի քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով: Բազարան գյուղից ներքև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով:

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով և ընդհանուր ֆոսֆորով<sup>2</sup>:

Գործունեության տարածքում կամ հարակից տարածքներում բացակայում են աղբյուրները և մակերևութային ջրային ռեսուրսները: Տարածաշրջանում մակերևութային ջրերը կապված են ժամանակավոր մթնոլորտային տեղումների հետ: Հիմնական ջրագրական միավորը Սելավ Մաստարա գետն է, որը գտնվում է տարածքից 2000մ հեռավորության վրա: Սելավ Մաստարայի ջրհավաք ավազանի մակերեսը կազմում է 1635 կմ<sup>2</sup>: Գետի ակունքն ընկած է Արագածի լեռնազանգվածի հարավային լեռնալանջերի վրա՝ 3100-3300մ բարձրություններում, իսկ ավազանի ամենացածր կետը ընկած է Մեծամոր գետի ակունքներին մոտ տարածքում՝ 849 մ բարձրության վրա:

Սելավ-Մաստարան իրենից ներկայացնում է ժամանակավոր գործող հեղեղատային գետահուն: Առկա վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ անձրևային 70 հորդացումների ժամանակ կարող է դիտվել 40 մ<sup>3</sup>/վ և ավելի ելք, ապա խոշոր սելավների ժամանակ կարող է դիտվել 170 մ<sup>3</sup> /վ ելք (1955թ.):

Սելավ Մաստարայի հոսքի ձևավորման մեջ մեծ է ձնածածկույթի դերը: Միջին հաշվով գետի սնուցման ավելի քան 40 %-ը բաժին է ընկնում ձնահալոցքային ջրերին, քանի որ գետային հոսքի ձևավորման համար ձյան պաշարների կուտակման հիմնական գոտին 1800-2800 մ ընկած բարձրություններն են, հոսքի մնացած ծավալի մեջ իր հսկայական դերն ունեն անձրևային ջրերը, և հատկապես հորդառատ անձևները, որոնք նպաստում են սելավների ձևավորմանը: Սակավաջուր ժամանակահատվածում գետը գրեթե չորանում է: Մաստարայի սելավները կրկնվում են մոտավորապես 2-3 տարին մեկ անգամ: Մաստարայի սելավի մասին տեղեկություններ կան դեռևս 1905թ., որոնք


<sup>2</sup> <http://armmonitoring.am/>

բոլորն էլ եղել են ցեխաքարային բնույթի: Սելավ Մաստարայի սելավային հոսքերը հիմնականում ձևավորվում են գարնանային և ամառային հորդառատ անձրևների հետևանքով, հազվադեպ նաև ձնահալոցքային ջրերից: Հիդրոլոգիական տարեգրերում առկա է տեղեկատվություն, որ Սելավ Մաստարայում դիտվել են 165-170մՅ/վ սելավային հոսքեր:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի:

Նկար 6. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

2.2 Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



### 3.7. Հողածածկ

Տարածաշրջանին բնորոշ են կիսաանապատային գորշ խճաքարային տիպիկ տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած հողային տիպերը: Կախված ռելիեֆի պայմաններից և էոզոգիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Կիսաանապատային գորշ հողերով ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայր տեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են  $\text{CaSO}_4$ ,  $\text{MgSO}_4$  և այլ աղեր: Այս տիպի հողերին բնորոշ է հումուսի չնչին պարունակությունը (1-1.5%): Աչքի են ընկնում իրենց քարքարոտությամբ, հանդիպում են ինչպես մակերեսային, այնպես էլ թաղված և կիսաթաղված քարեր: Ռելիեֆի անհարթության, նվազ բուսականության և անբարելավ ֆիզիկական հատկությունների հետևանքով այս հողերը ենթարկվում են ջրային, մասամբ էլ քամու էոզոգիայի:

Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա: Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է միջինը 20սմ սահմաններում: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ<sup>3</sup>-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ<sup>3</sup>-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Հողամասում որևէ արտադրական գործունեություն չի իրականացվել և այն աղտոտված չէ արտահոսքերով, թափոններով, կամ այլ վտանգավոր նյութերով:

02-016-0250-0048 կադաստրային ծածկագրով հայցվող տարածքը գրանցված է որպես գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակությամբ: Գործառնական նշանակությունը՝ վարելահող, այլ հողատեսք, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների: 4,209857 հա մակերեսով հողամասում գյուղատնտեսական վարելահող՝ 1,394064 հա, գյուղատնտեսական այլ հողատեսք՝ 0,926503, արդյունաբերության,


ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ 1,889290 հա:

Անմիջապես նախատեսվող տարածքում հողածածկը հողաբուսական շերտի ավազակավի, կավավազի լցնումով է: Շերտի հզորությունը 0.0-0.20մ է, համաձայն ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի 1 հողամասի տարածքի ինժինեռաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության եզրակացության: Հողածածկի շերտի ծավալը միջինը՝ 0.1 մետր հզորությամբ կառուցապատվող հողամասում գնահատվել է 900 մ<sup>3</sup>: Կառուցապատվող տարածքից հանվող հողաբուսական ծածկը կպահպանվի հատուկ միջոցառումներով և կօգտագործվի հողամասում նախատեսվող կանաչապատման աշխատանքներին:

### 3.8. Կենսաբազմազանություն

#### 3.8.1. Բուսական աշխարհ

Ուսումնասիրվող շրջանը մտնում է Ապարանի ֆլորիստիկ շրջանի մեջ: Տարածքին բնորոշ է կիսաանապատային բուսականությունը:



Հայաստանի ֆլորիստիկ շրջանները (Таманян, Файвуш, 2009): Ապարանի ֆլորիստիկ շրջանը 5-րդ է:

Արարատյան գոգավորության, նաև Զանգեզուրի, Մեղրիի ու Վայքի լեռնաշղթաների վրա (600-1500 մ բարձրություններում) գտնվող գրեթե բոլոր չոր, անջրդի հողատարածքները՝ դռերը, ծածկված են կիսաանապատային բուսականությամբ: Ի տարբերություն անապատների՝ այստեղ բուսական համակեցությունում զգալի տոկոս են կազմում էֆեմեր ճիմ առաջացնող դաշտավլուկազգիները (անապատասեզ, ցորնուկ, այծակն, դաշտավլուկ և այլն):



Նկար 7. Կիսաանապատային բուսականություն

Տարածվում են կարճակյաց բույսերը, որոնք ունեն խորը առանցքային արմատներ և կյանքի համար անհրաժեշտ խոնավությունը վերցնում են հողի ստորին շերտերից, որտեղ նկատվում են գրունտային ջրերի ելքեր, տարածված են եղեգնուտները:

Հայաստանի կիսաանապատային բուսականության գերակշռող բույսերն են. հոտավետ օշինդր, Կապար փշոտ, Սիզախոտ, Նշենի Ֆենցլի, Կոխիա, լերդախոտ, բորբոսատեսուկ, դաշտավլուկ, կապար, հազարատերևուկ, որոնք երբեմն առաջացնում են ինքնուրույն բուսական համակեցություններ:

Անմիջապես գործունեության տարածքը շրջապատված է վարելահողերով, մշակովի հողատարածքներով, պտղատու ծառերի այգիներով, որտեղ արդեն առկա է մարդկային ազդեցությունը, հետևաբար կարմիր գրքյան բուսատեսակները բացակայում են:

### 3.8.2. Կենդանական աշխարհ

Ընդհանուր առմամբ, տարածքի ֆաունան կարող է բնութագրվել որպես Հայաստանի քարքարոտ կիսանապատային և չոր լեռնատափաստանային գոտիներին բնորոշ: Կենդանական աշխարհը շատ աղքատիկ է: Առկա են եզակի էքստրազոնալ, մասնավորապես՝ գերխոնավ բիոտոպերին բնորոշ տարրեր:

Տարածաշրջանի տափաստանային լանդշաֆտներում կենդանական աշխարհի ներկայացուցիչներից են. ճագարամուկը, նապաստակը, աղվեսը, գայլը, մողեսները, օձերը: Կաթնասուններից հանդիպում են սովորական և սարահարթային դաշտամուկը, սովորական աղվեսի հայկական ենթատեսակը: Մորեխներից քանակապես գերակշռում է սովորական իտալական մորեխը, բնորոշ են ձիուկներ և մթնաթևեր, աղոթարար



իրիսը: Բազմաթիվ են բզեզները՝ սև և փոսիկավոր կարաբուսներ, գերեզմանափորը, գլաֆիրուսները, բրոնզաբզեզները:

Այստեղ ենթադրաբար բնակվող սողուններից հանդիպում են Բազմերանգ սահնօծ, Լճագորտ, Կանաչ դողոշ և այլն:

Տարածաշրջանում ենթադրաբար ապրող թռչունների տեսակներից 15 տեսակ ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում և Հայաստանի Կարմիր գրքում: Բուն տարածքում առկա 7 թռչուններից միայն մեկ տեսակ կարող է դասակարգվել որպես բնադրող: Սա Սպիտակափող սոխակն է: Մնացածը, ինչպիսիք են կռունկները, որորները և ներկարարը, կարող են դասակարգվել որպես պատահական միգրացիոն տեսակներ: Իսկ գիշատիչ թռչունների կարգի ներկայացուցիչները՝ Գիշանգղ, Օձակեր արծիվ և Փոքր ենթարծիվ, այցելում են այս տարածք սննդի որոնման համար: Հաշվի առնելով այս ուսումնասիրվող տարածքում կրծողների մեծ գաղութների բացակայությունը և նրանց քչաքանակ գրանցումները, այս տարածքը հիմնական կերակրավայր չի հանդիսանում:

Կարմիր գրքում գրանցված աղավնաբազե (Falco columbarius Linnaeus) տեսակը Հազվագուտ, անհետացող, սակավաթիվ և քիչ ուսումնասիրված տեսակ է: Համաձայն ՀՀ կենդանիների Կարմիր գրքի Հայաստանում չվահյուր և ձմեռող է, Հայաստանում չի բնադրում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Տարածված է ք. Երևանի շրջակայքում և Հրազդանի շրջանում: Հայաստանում ապրելավայրերը զգալիորեն քայքայվել են գյուղատնտեսական նպատակով այդ տեղամասերի յուրացման հետևանքով:

Տարածքում չեն գրանցվել ՀՀ Կարմիր գրքում գրանցված անողնաշար կենդանիների որևէ խմբի պատկանող տեսակներ: Չեն հայտնաբերվել նաև այլ որոշակի բնապահպանական նշանակություն ունեցող նեղ տարածվածություն ունեցող տեսակներ:

### **3.8.3. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Դիտարկվող տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների հետ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն: Բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված տեսակներ չեն արձանագրվել:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշման Արագածոտնի մարզի տարածքում է գտնվում «Արագածի քարե լիճ» պետական արգելավայրը, որի հեռավորությունը գործունեության ենթակա տարածքից կազմում է 20կմ՝ դեպի հյուսիս-արևելք ուղղությամբ:

Արագածի ալպյան պետական արգելավայրը կազմավորվել է 1959 թվականի հունվարի 29-ի ՀՍՍՀ ՄՍ N 20 որոշումով, Արագած լեռան սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

Գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում՝ Արագած լեռնազանգվածի 3200-3500 մ բարձրություններում, զբաղեցնում է Արագածի հարավային տարածքը, ունի 300 հա տարածք:



Արագածի ալպյան արգելավայր, բնության հատուկ պահպանվող տարածք, Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկը:

### 3.9. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ

Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների հետ: ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը: Ստորև ներկայացվում է սույն որոշմամբ հաստատված Արագածոտնի մարզում գտնվող բնության հուշարձանների ցանկը, որոնք առավել մոտ են նախատեսվող գործունեության տարածքին:

#### **Երկրաբանական հուշարձաններ**

«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ
«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ

#### **Բնապատմական հուշարձաններ**

«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ
-----------------------------	---

Արագածոտնի մարզում հաստատված բնության հուշարձանները նախագծվող տարածքից գտնվում են 5-6կմ և ավելի հեռավորության վրա:

Այսպիսով, Սառնարանային տնտեսության կազմակերպման աշխատանքների համար նախատեսվող տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, բացակայում են:

## 4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 4.1 Մարզի սեցիալ-տնտեսական բնութագիրը

Արագածոտնի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևմուտքում: Մարզը հյուսիսից սահմանակից է Շիրակի և Լոռու մարզերին, արևելքից՝ Կոտայքի մարզին, հարավում՝ Արմավիրի մարզին և ք. Երևանին, իսկ արևմուտքում պետական սահմանով՝ Թուրքիային:

Տարածքը	2 773 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.3 %
Համայնքներ, 2023թ. դրությամբ	8
Քաղաքներ	3
Գյուղեր	118
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկզբի դրությամբ	125.7 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	26.8 հազ. մարդ
գյուղական	98.9 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	4.2 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	21.3 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	218 813.6հա
այդ թվում՝ վարելահողեր	54 352.2հա

2022թ.-ին Արագածոտնի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.2 %,
- գյուղատնտեսություն 9.9 %,
- շինարարություն 4.7 %,
- մանրածախ առևտուր 1.8 %,
- ծառայություններ 0.7 %:

Մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն են:

Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիներ՝ Երևան – Աշտարակ –Թալին - Գյումրի, Երևան –Աշտարակ – Սպիտակ և Երևան – Արմավիր – Քարակերտ – Գյումրի: Մարզի տարածքը հատում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

## **Արագածավան**

Բնակչություն՝ 6 234 մարդ

Արագածավանը գյուղ է Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի տարածքում: Թալին քաղաքից 21 կմ հարավ-արևմուտք: Տեղադրված է Արմավիր-Գյումրի միջպետական նշանակության ճանապարհի վրա: Մարզկենտրոնից գտնվում է 71 կմ հեռավորության վրա:

1974 թվականից եղել է քաղաքատիպ ավան, 1995 թվականից հետո՝ գյուղական բնակավայր:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և երկրագործությամբ:

Արագածավանը հայտնի է ընդերքի օգտակար հանածոներով՝ որոնք են օբսիդիանը, տուֆը, բազալտը, և աշխարհում հայտնի արագածի պեռլիտը, որը խորհրդային տարիներին արտահանվում էր մի շարք երկրներ:

Արագածավանում հիմնականում մշակվում է ծիրան, խնձոր և խաղող, որոնք իրենց որակով և համային հատկանիշներով շատ բարձր են գնահատվում ինչպես հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Մշակվում է նաև հացահատիկ և առվույտ: Այստեղ է գտնվում «Արագած պեռլիտ» ձեռնարկությունը, որն օգտագործում է սեփական հումքը: Համայնքում գործում է նաև գինու գործարան:

Գյուղն ունի 1022 տնտեսություն: Գյուղում կա երկու միջնակարգ դպրոցներ, մանկապարտեզ-նախակրթարան, երաժշտական դպրոց, մշակույթի տուն, պարի և գեղարվեստի խմբակներ, հարուստ գրականությամբ գրադարան:

Գյուղատնտեսության մեջ մեծ բաժին ունի բուսաբուծությունը: Մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաներ: Զբաղվում են պտուղների աճեցմամբ, բազմամյա տնկարկները գտնվում են տնամերձ հողակտորներում: Համայնքային հողերի մոտ 1/3-ը վարելահողերն են: Արոտավայրերը զբաղեցնում են պահուստային հողերի շուրջ 57%: Բուծում են մանր եւ խոշոր եղջերավոր անասուններ: Ունի կաթի մշակման եւ կաթնամթերքի արտադրության կետ: Համայնքի տարածքում գտնվում է 7-րդ դարին վերաբերող եկեղեցու ավերակները:

Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1255 մ բարձրության վրա: Կլիման մերձարեադարձային, չափավոր ցամաքային է, աչքի է ընկնում ցամաքայնությամբ: Ամառները շոգ են եւ չոր, ձմեռները՝ ցուրտ, ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -5,-6-ի սահմաններում, հուլիսյանը՝ 22-24-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 350-400մմ: Բնական լանդշաֆտները չոր տափաստաններն են: Խմելու նպատակով օգտագործվում է Ախուրյան գետի ջրերը, իսկ ոռոգման նպատակով ջրերը տեղափոխվում են Թալինի ջրանցքով:

## 5. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

### 5.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ գործունեություն չի իրականացվում, չի կառուցվում սառնարանային պահեստային շենք, չի ձևավորվում սառնարանային տնտեսությունը և մրգի երկարատև պահպանում՝ ջերմաստիճանային կարգավորման հնարավորությամբ չի իրականացվում:

Այս դեպքում՝

- բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ, ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնաժին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից, զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- նախագծի իրականացման ընթացքում, ինչպես նաև շահագործման փուլում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորությունները,
- չի կառուցվի ժամանակակից տեխնոլոգիաներով սառնարանային խցիկներ, որոնք հնարավորություն կստեղծեն իրականացնել սեզոնային մրգի երկարատև պահեստավորում:

### 5.2. Քննարկվող տարբերակներ

«ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊ ընկերությունը ներկայումս զբաղվում է այգեգործական տնտեսական գործունեությամբ՝ մշակում է պտղատու այգիներ և նպատակ ունի երկարատև պահպանել մրգի արտաքին տեսքը և համային հատկանիշները: Գործունեության համար դիտարկվել են ստորև ներկայացված 2 տարբերակները.

- Կառուցվում է փոքր ծավալի սառնարանային պահեստային շենք:
- Այս տարբերակի թերություններն են.
- հնարավոր չէ պահեստավորել և պահպանել մեծ քանակությամբ մրգերի տեսակներ,
- հնարավոր չէ լուծել մրգի արտաքին տեսքի և համային հատկանիշների պահպանման հետ կապված խնդիրները:

Տարբերակի առավելություններն են.

- նախատեսվող շին.աշխատանքների ծավալները փոքր են, իրականացվում են փոքր ներդրումներ, և ազդեցությունը շրջակա միջավայրի վրա զգալի չեն,
- կառուցել համեմատաբար ավելի մեծ սառնարանային խցիկներով պահեստային շենք,

- այս տարբերակի թերությունն այն է, որ կատարվում են խոշոր ներդրումներ, շին.աշխատանքների ծավալները մեծանում են, բնապահպանական և սոցիալական ազդեցությանը շրջակա միջավայրի վրա համեմատաբար ավելի զգալի են սակայն կրում են ժամանակավոր բնույթ:

Առավելություններն են.

- որոշ չափով լուծվում է ոչ միայն սեփական այգիների, այլև հանրապետությունում պահեստավորման ենթակա մրգի քանակի տեսակավորման և պահեստավորման հետ կապված խնդիրները՝ սառնարանային խցիկներում
- երկարատև պահպանվում է մրգի համային և տեսքային հատկանիշները
- որոշ չափով կարգավորվում է շուկայում ոչ սեզոնային մրգերի պահանջարկը և գները:

Վերլուծելով նշված տարբերակների դրական և բացասական կողմերը, ոլորտում առկա խնդիրների լուծման անհրաժեշտությունը, ընտրվել է երկրորդ տարբերակը:

## **6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)**

### **6.1. Ընդհանուր տեղեկատվություն**

Աշխատանքային նախագծով նախատեսված է կառուցել սառնարանային պահեստային տարածք ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան գյուղի 1 հողամաս հասցեում:

Սառնարանային պահեստային շինությունը տեղակայված է հողամասի ճակատային հատվածից (Ճանապարհից) 38մ հեռավորության վրա, մասնավոր կոնստրուկտիվ տարրերից՝ 29մ հեռավորության վրա:

Կառույցն իրենից ներկայացնում է՝ երկու խոշոր, երկու միջին և ևս հինգ կոնստրուկտորական լուծումներով բլոկների համադրություն: Շինության տանիքը լանջավոր է, ջրամեկուսացումը և ջերմամեկուսացումը՝ կազմակերպած սենդվիչ պանելների միջոցով, ջրահեռացումը կազմակերպված: Կառույցը համապատասխանում է 1297.50 բացարձակ նիշին:

Շենքում նախատեսված է թվով 28 սառնարանային խցիկներ՝ յուրաքանչյուրը 849 մ<sup>3</sup> ծավալով:

Շենքի բոլոր կոնստրուկտիվ տարրերի կառուցապատման հատակագծային մակերեսը 0.00 նիշում 9740մ<sup>2</sup> է, որից 1950մ<sup>2</sup>-ը հովարային ծածկով կիսաբաց պահեստային տարածք է:

Շենքի ճակատների արտաքին գումարային մակերեսը կազմում է 4500 մ<sup>2</sup>: Շենքն իր մեջ ներառում է երկհարկանի գրասենյակային մասնաշենք ընդհանուր՝ 530 մ<sup>2</sup> մակերեսով: Ներքին և արտաքին շին. Նյութերն են - հատակները՝ 0.00 նիշում ե/բ սալ՝

տոպինգով, պատերը՝ սենդվիչ պանելներ, ֆասադային ապակիներ, միջնորմները՝ սենդվիչ պանելներ, գիպսաստվարաթուղ, ապակի, առաստաղը՝ սենդվիչ պանելներ, գրասենյակային մասնաշենքում՝ ե/բ: Արտաքին դռները և հրդեհային էվակուացիայի ճանապարհին գտնվող դռները հակահրդեհային են:

Հողամասում կառուցապատման ցուցանիշներն են.

Տարածքի ընդհանուր մակերես՝	4,20988 հա
Շենքի զբաղեցրած մակերեսը հողամասում՝	9645 քմ
Շենքի կառուցապատման մակերեսը	9680 քմ
Կառուցապատման խտության գործակիցը՝	0,25
Կառուցապատման տոկոսը՝	39,8 %
Կանաչապատման տոկոսը՝	60,2 % (25344 քմ):

**6.2. Հիմնական տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները**

Գլխավոր շինությունը իրենից ներկայացնում է միահարկ կառույց, որի հատակագծային ընդհանուր առանցքային չափերն են՝ 100,0 x 14,0 մ, որը կարաններով բաժանված է երկու մասերի:

Շենքի հիմնակմախքը իրենից ներկայացնում է մետաղական սյուներից և ուղղաձիգ կապերից բաղկացած շրջանակային միահարկ համակարգ: Վերջինս ջերմային կարանով բաժանված է երկու մասերի՝ 53,8 x 95մ և 41,8 x 95մ: Լայնական շրջանակները իրենցից ներկայացնում են 37մ թռիչքներով երկթռիչքանի շրջանակներ, որոնց սյուները և պարզունակները կազմովի երկտավրեր են: Սյուների հատվածքը ըստ բարձրության հաստատուն է, իսկ պարզունակները ըստ երկարության ունեն փոփոխական հատվածքներ: Շրջանակի և ընդհանուր շենքի տարածական կոշտությունը ապահովվում է շրջանակի կոշտ հանգույցներով և հիմքում կոշտ ամրակցմամբ: Լայնական շրջանակները տեղադրված են 6,0 մ քայլով և միմյանց կապվում են երկայնական պարզունակներով և ուղղաձիգ կապերով, ինչպես նաև ծածկի հիմնակմախքով:

Ծածկը իրենից ներկայացնում է հիմնական պարզունակների վրա հենված կավարամածային համակարգ, որի վրա հենվում է տանիքածածկույթի ջերմա և ջրամեկուսացնող սալերը: Ծածկի կոշտությունը ապահովվում է նաև պարզունակների միջև տեղադրվող X-աձև հորիզոնական կապային համակարգը: Կավարամածը նախատեսված է իրականացնել 7-աձև պրոֆիլի հեծաններից: Տանիքը երկլանջ է, ջրահեռացումը կազմակերպված՝ ներքին:

Հիմքերը կետային են, որոնք միմյանց հետ կապված են հիմնային պահանգներով՝ միայն արտաքին ուղղագծերով: Կետային հիմքերը մետաղական սյուներին ամրակցվում է խարսխային հեղուանների միջոցով, որոնք նախապես թողնվում են հիմքի մեջ: Արտաքին պատերը նույնպես նախատեսված են թեթև ջերմա-ջրամեկուսացումով սալերից, որոնք ամրակցվում են հորիզոնական կավարամածին:

Կողային լայնական ուղղությամբ ճակատների համար նախատեսված են մետաղական սյուներ, որոնք հիմքին ամրակցվում են կոշտ կերպով իսկ վերնամասում

շրջանակի հետ ամրակցվում են ճկուն կերպով այնպես, որ շրջանակին փոխանցեն միայն քամու հորիզոնական ազդեցությունը: Այլ օժանդակ շինությունները ինչպես նաև գրասենյակային շինությունը նույնպես ունեն մետաղական հիմնակմախք և լուծված են նույնպես շրջանակային համակարգերով, սակայն շահագործվող բոլոր ծածկերը այստեղ նախատեսված են պրոֆիլավորված ե/բ սալի միջոցով, որը հենվում է մետաղե հեծանավանդակի վրա: Մետաղական տարրերի եռակցումը նախատեսված է կատարել Յ42 էլեկտրոդով, կարի հաստությունը բոլոր չնշված տեղերում ընդունել եռակցվող տարրերի հաստություններից փոքրին հավասար: Շենքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում՝ գրունտի սեյսմիկ կարգը հաշվարկներում ընդունված է II:


**Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ**

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հողային աշխատանքների կատարման համար օգտագործվում են թրթուրավոր էքսկավատոր: Փոսորակի քանդման աշխատանքներից հետո բուլդոզերը հարթեցնում է այն: Տվյալ հատվածի արտաքին պատերի իրականացումից հետո կատարվում է մեկուսացման աշխատանքներ և հողի ետլիցք շերտ-շերտ:



Նկար 7. Գլխավոր հատկագիծ





Նկար 8. Շինության հատակագիծը

### 6.3. Նախապատրաստական աշխատանքներ

Շինարարական աշխատանքների կազմակերպումն իրականացվում է 2 փուլով՝ նախապատրաստական և հիմնական աշխատանքներ:

Նախապատրաստական փուլում իրականացվում են.

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր տնակների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- ջրի պահեստային բաքի տեղադրում,
- կեղտաջրերի հավաքման ժամանակավոր տարողության տեղադրում
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ:

Շինհրապարակի կազմակերպման ընդհանուր սխեմա.

- ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում
- շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից:

Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Շինհրապարակում կարևորվում են հետևյալ միջոցառումների կատարումը:

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ մնացած նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

- Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը: Այսպիսով՝ կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը:

Հրապարակում սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) ժամանակավոր կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստրուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահումը շինհրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

Շինարարական մեքենաները շինարարական հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Մեքենաների անվադողերը պետք է լվացված լինեն շինհրապարակից դուրս գալուց առաջ: Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու առաջացումներ:

Հողային աշխատանքների ծավալները ներկայացնում են՝ հանույթ – 420մ<sup>3</sup>, հետլիցք – 80 մ<sup>3</sup>, մնացորդային հողային զանգված - 340 մ<sup>3</sup>: Մնացորդային հողային զանգվածը Արագածավան համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված կհեռացվի համապատասխան աղբավայր:

Արագածավան բնակավայրում նախատեսվող սառնարանային պահեստային շենքի կառուցման աշխատանքների սկիզբը իրականացվում է՝ բերրի հողաշերտի կտրումով և ժամանակավոր պահեստավորման վայր տեղափոխումով: Հողակտորների նախնական ուսումնասիրության ընթացքում նկարագրվել է, որ տարածքի տարբեր մասերում բերրի հողի հզորությունը տատանվում է 0 – 20 սմ: Հողածածկի շերտի ծավալը միջինը՝ 0.1 մետր հզորությամբ կառուցապատվող հողամասում գնահատվել է 900 մ<sup>3</sup>:

#### 6.4. **Շինարարական աշխատանքների բնութագիրը**

Շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա

ապլվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը 18 ամիս է, այդ թվում

- Նախապատրաստական աշխատանքներ՝ 1 ամիս,
- Հողային աշխատանքներ՝ 4 ամիս,
- Շինարարական աշխատանքներ՝ 10 ամիս,
- Սարքավորումների տեղադրում, փորձարկում՝ 3 ամիս:

Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում “հետքահ”կատարվում են էքսկավատորով: Բնահողը տեղափոխվում է ավտոինքնաթափերիմիջոցով : Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով փոքր մեխանիզմներով: Հինքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ):

Շենքերի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է պնևմոանիվային կռունկ AD-30 մակնիշի: Բոլոր տիպի շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՄՆԻՊՈՒՍ-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

##### 6.4.1. **Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը**

ՋԿ մասի նախագծում նախատեսվում են հետևյալ համակարգերը

- Խմելու-տնտեսական ջրամատակարարում
- Ներքին կենցաղային կեղտաջրերի կոյուղի

Սառնարանի խմելու տնտեսական ջրամատակարարումն իրականացվում է բերովի ջրի պահեստավորմամբ: Մուտքագծերի անցքերը պատվում են ջրագազաանթափանց էլաստիկ նյութով:

Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսվում են փակող արմատուրա:

Ջրամատակարարման ներքին ցանցը փակուղային է: Ներսում ջրագիծն իրականացվում է Փ 32–20մ տրամագծի Պէ եռակցվող խողովակներով:

Համակարգը նախատեսված է սանիտարատեխնիկական սարքերից տնտեսակենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Շենքի կեղտաջրերի հեռացումը ինքնահոս կատարվում է բակային ցանց, որտեղից կոյուղու սեպտիկ հոր, որը նախատեսված է ամենացածր նիշում: Ծավալը նախատեսված է 50 խմ: Այն որոշակի պարբերականությամբ կդատարկվի հատուկ մեքենաների միջոցով պայմանագրային հիմունքներով:

Կոյուղու ներքին ցանցը նախատեսված է Փ100մմ Փ50մմ տրամագծի կոյուղու պոլիէթիլենե խողովակներից: Կանգնակների վրա տեղադրված ստուգիչների դիմաց հորանների վրա նախատեսել դռնակներ:

Խողովակների հորիզոնական միացումները իրականացվում են թեք ձևավոր մասերով:

Նախագծի ջրամատակարարում և կոյուղի մասը կատարված է համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող շին. նորմերին ու կանոններին համապատասխան:

#### **6.4.2. Ավտոմատ հակահրդեհման համակարգ**

Սառնարանի շենքի ավտոմատ հակահրդեհային ջրի ծախսը, համաձայն նորմաների կազմում է 52 լ/վրկ: Ջրով հրդեհամարման դեպքում աշխատանքների շարունակությունը 30 րոպե:

Ավտոմատ հակահրդեհային ցանցի դեպքում ներքին հակահրդեհային ցանցը պետք է միացվի նախագծվող սպրինկլերային ջրով հրդեհաշիջման ցանցին:

Պոմպակայանում տեղադրված են 6 պոլիէթիլենե բաքեր 10,0 մ<sup>3</sup> ծավալով, որը ապահովում է խմելու ջրի պահուստային ծավալը, իսկ ներքին և ավտոմատ հակահրդեհային ծավալը 15 րոպեի համար, մինչև հրշեջ մեքենաների մոտեցումը:

Ավտոմատ հակահրդեհային և ներքին հրդեհամարման համար ընդունված է 2 պոմպ /1 աշխատող, 1 պահուստային/:

Պոմպակայանում նախատեսված է լվացարան և հակահրդեհային պահարան կրակմարիչով: Պողպատե խողովակները ներկվում են ջրակայուն ներկով 2 անգամ:

Արտաքին ցանցերի նախագիծը ներառում է նաև հրշեջ հիդրանտ (շենքից 200մ շառավղով բացակայության դեպքում), ինչը իրավասու մարմնի պահանջ է:

#### **6.4.3. Էլեկտրատեխնիկական համակարգ**

Նախագծով նախատեսվում է 0,4 կՎ. էլեկտրամատակարարում:

Ցանցի լարումը 380/220 Վ բերվելու է ВВГ 5x185 մակնիշի մալուխով տրանսֆորմատորային ենթակայանից:

Ուժային էլսարքավորումների լարումը 380 Վ է, էլ.լուսավորությանը ու

վարդակներինը՝ 220 Վ:

Եռաֆազ էլսպառիչների համար ընդունված է էլեկտրաէներգիայի բաշխման հինգավար /L1, L2, L3, N, PE/, իսկ միաֆազ սպառիչների համար /L N, PE/ համակարգ:

Ցանցերի սնուցումը կատարվում է ВВГ մակնիշի տարբեր կտրվածքի մալուխներով: Էլեկտրաանվտանգության ապահովման հիմնական միջոց օգտագործվելու է պաշտպանիչ հողանցման համակարգը:

Որպես հողանցման PE հիմնական հաղորդաձող հանդիսանում է 40 x 5մմ պողպատե հաղորդաձողը:

Տրանսֆորմատորային ենթակայանում էլեկտրաէներգիայի անջատման դեպքում որոշ բեռների համար նախատեսված է դիզել գեներատոր:

#### **6.4.4. Հակահրդեհային ազդարարման համակարգ**

Սույն նախագծում բոլոր տեխնիկական միջոցառումները մշակված են ՀՀ տարածքում գործող բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմերին համապատասխան:

Համակարգի նախագծվող միջոցները դեպի մթնոլորտ վնասակար նյութեր չեն արտանետում:

Նախագծված է հրդեհի ահազանգման հասցեավորված համակարգ, որը հնարավորություն է տալիս ճշգրտությամբ որոշել տեղեկատվություն հաղորդող ազդասարքերի տեղը և համապատասխան ձևով արձագանքել:

Համակարգն աշխատում է երկու ռեժիմով «Ավտոմատ միացում» և «Ձեռքով միացում»:

##### **«ԱՎՏՈՄԱՏ ՄԻԱՑՈՒՄ» ՌԵՃԻՄ**

Աշխատանքի հերթապահ ռեժիմում գծի վերահսկիչը պաշտպանվող տարածքներում իրականացնում է հրդեհի ազդարարման համակարգի երկլարանի գծի վերահսկողություն, ինչպես նաև լուսաձայնային ազդարարներին տրվում է համապատասխան ձայնային և լուսային ազդանշան:

Ռելեային բլոկը ապահովում է նախագույշական ազդանշանի միացումը:

##### **«ՁԵՌՔՈՎ ՄԻԱՑՈՒՄ» ՌԵՃԻՄ**

Ձեռքով միացումն իրականացվում է ձեռքի ղեկավարման հասցեային ազդասարքերից: «Ձեռքով իրազեկում» ռեժիմում սարքը սկսում է աշխատել այնպես, ինչպես նշված է «Ավտոմատ միացում» ռեժիմ» բաժնում:

##### **ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ՑԱՆՑ**

Մալուխային ցանցն իրականացվում է 2x2x1,0մմ և 2x2x1,5մմ հրակայուն մալուխներով: Ազդասարքերի օղակային համակցման համար օգտագործվում են 1x2x1,13մմ հրակայուն մալուխներ: Մալուխները տեղադրվում են պլաստմասսե 25մմ ճկախողովակներով:

Պաշտպանվող տարածքում և ճանապարհների երկայնքով համակարգի մալուխները տեղադրվում են ուժային, լուսավորման մալուխներից և լարերից առանձին:

#### 6.4.5. Օդափոխության համակարգ

Կլիմայական տվյալներն են ձմռանը՝ ջեռուցման համար հաշվարկային ջերմաստիճանը  $-19^{\circ}\text{C}$ , ջեռուցման ժամանակաշրջանի միջին ջերմաստիճանը  $+1^{\circ}\text{C}$ , ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը 140 օր:

Ճաշասրահի հատվածում աշխատում են  $\text{N}_1$  ներածման և  $\text{Ա}_1$  արտածման համակարգերը, որտեղ ունենում ենք օդի դրական դիսբալանս:

Պահեստային տարածքի համար օդափոխությանը հաշվարկվել է  $n=1$  բազմապատիկով, ելնելով շենքային պայմաններից, պահեստային մասում նախատեսվում է ներածման արտածման ռեկուպերացիոն համակարգ:

#### 6.5. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Սառնարանային պահեստային շենքի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, խիչ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Շինարարության փուլում ջրցանման և աշխատողների կենցաղային կարիքների համար անհրաժեշտ ջրի մատակարարումը կիրականացվի բերովի ջրի պահեստավորմամբ: Ջրի բերման աղբյուրը կորոշվի դրական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին պատկանող ջրամատակարարման ցանցից՝ համապատասխան պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերի համար շինհրապարակում կտեղադրվի բիոզուգարան, որը կսպասարկվի մատակարարող ընկերության կողմից:

Ինչպես արդեն նշվել է բնառեսուրսներից շինարարության ընթացքում կօգտագործվի ջուր՝ ջրցանի և անձնակազմի կենցաղային կարիքների համար:

Ջրցանը իրականացվելու է տարվա տաք և չոր եղանակին: Նման օրերի հաշվարկային թիվը ընդունվում է տարեկան 180 օր, ընդամենը՝ 270 օր:

Քանի որ մոտակայքում չկա տեխնիկական ջրի համար բերման աղբյուր, ջուրը կբերվի «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին պատկանող ջրամատակարարման ցանցից: Համապատասխան պայմանագիրը «Վեոլիա ջուր» ՓԲԸ հետ կկնքի դրական փորձաքննական եզրակացության ստացման դեպքում:

*Ջրցանի օրական ջրապահանջը կկազմի՝*

$$W = S \times 2 \times 0.0015, \text{ որտեղ}$$

$S$  – ջրցանվող տարածքը, որն ներառում է շինհրապարակը, կայանատեղին և ներքին ճանապարհները՝ 2200 մ<sup>2</sup>

2 - օրական ջրցանի քանակը,

0.0015 – 1 մ<sup>2</sup> ջրցանի նորմը լիտրերով:

$$W = 2200 \text{ մ}^2 \times 2 \times 0.0015 \text{ լ/մ}^2 = 6.6 \text{ մ}^3/\text{օր}, \text{ շինընթացքում } 6.6 \text{ մ}^3 \times 260 = 1716 \text{ մ}^3:$$

### **խմելու-փնփրեսական կարիքներ**

Ջրապահանջը հաշվարկվում է համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝

$W_{\text{խ.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T$ , որտեղ

$n_1$  – ԻՏԱ թվաքանակն է՝ 6 մարդ

$N_1$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

$n_2$  – բանվորների թվաքանակն է՝ 32 մարդ

$N_2$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

$T$  - աշխատանքային օրերի թիվն է ամբողջ շինընթացքում՝ 390 օր

$W_{\text{խ.}} = (6 \times 0.016 + 32 \times 0.025) \times 390 = 349.44$  մ<sup>3</sup>/տարի:

Օրական՝ 0.896 մ<sup>3</sup>/օր:

Ինչպես արդեն նշվել է ջրցանման և աշխատողների կենցաղային կարիքների համար կոգտագործվի բերովի ջուր, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին պատկանող ջրամատակարարման ցանցից կամ առևտրային կետերից՝ համապատասխան պայմանագրով, որը կկնքվի փորձաքննական դրական եզրակացություն ստանալուց հետո:

Սառնարանային տնտեսության խմելու տնտեսական ջրամատակարարումն իրականացվում է բերովի ջրի պահեստավորմամբ: Տնտեսությունը ապահովված կլինի խմելու-տնտեսական ջրամատակարարման համակարգով:

### **6.6. Սառնարանային սարքավորումների տեխնիկական ցուցանիշները**

Սառնարանային տնտեսությունում պահեստային տարածքներում /սենյակներ/ ջերմաստիճանային ռեժիմը ապահովվելու է մի շարք ճանաչված ընկերությունների սարքերի համախումբը /համալիր/:

Համալիրի հիմնական տեխնիկական ցուցանիշները բերված են ստորև.

- Սառեցման եղանակը՝ ֆրեոնային,
- Կոմպրեսորներ՝ BITZER, SCH9583-210Y,
- Օդամղիչներ՝ Atlas Copco,
- Սառեցնող ագրեգատներ՝ Stefani SIDW50-5
- Խցերում/սենյակներում աշխատանքային ջերմաստճանային ռեժիմներ՝ -5°C - +5°C:
- Էլեկտրականության ծախս.
  - Աշխատանքային՝ 400 կվտ/ժամ,
  - Առավելագույնը՝ 900 կվտ/ժամ,
  - Տարեկան առավելագույն ծախս՝ 1,100,000 կվտ:

## **7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

### **7.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը**

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- հիմքերի փորման ընթացքում,
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի

շահագործման ժամանակ,

- հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման հետ կապված,
- շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- բետոնային աշխատանքների իրականացմամբ,

- շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,

- շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

#### **7.1.1. Օդի աղբյուրում**

Նախատեսվող գործունեության հետ կապված աշխատանքներն ուղեկցվում են օդի աղտոտմամբ՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են շենքի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզելավառելիքի աշխատանքի դեպքում: Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները տեղայնացված են, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Քանի որ շին հրապարակը բաց տարածք է, ապա նույնիսկ քամու միջին արագության պայմաններում արտանետումները ենթակա են արագ ցրման:

Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում շինհրապարակի ներսում, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում՝ շարժական աղբյուրներից: Այս արտանետումները կրում են



ժամանակավոր բնույթ: Քանի որ շինարարական թափոններ և շինանյութեր տեղափոխող մեքենաների համար կսահմանվեն երթեր /մեքենաները դուրս կգան սահմանված ժամանակացույցով/, ապա շինհրապարակից դուրս օդի աղտոտվածության ավելացում չի լինի: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում արտանետումների քանակները լրացուցիչ կնվազեցվեն հայտում նախատեսված միջոցառումների իրականացմամբ /ջրցան կամ տեխնիկական միջոցների կարգաբերում և այլն/:

### **7.1.2. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, հանված հողային զանգվածի խոնավացման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից: Մինչև կոյուղատարի կառուցումը շինհրապարակում կտեղադրվի սանհանգույց և կեղտաջրերի հավաքման հոր, անթափանց հատակով և պատերով, որի պարունակությունը պարբերաբար կտեղափոխվի Վեոլիա ջուր ՓԲԸ կողմից նշված կոյուղու համակարգ, համաձայն պայմանագրի, որը կկնքվի դրական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո:

Սառնարանային տնտեսության շինարարության փուլում՝ մակերևութային հոսքերի արդյունավետ կազմակերպման և հեռացման նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- հողային զանգվածների համար ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Պարզարանում մեխանիկական նստեցումից հետո, պարզեցված ջուրը կրկին օգտագործել տարածքի ջրցանման համար, իսկ նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

### **7.2. Բնապահպանական միջոցառումների ծրագիր**

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները

կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

### **7.2.1. Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարության ընթացքում իրականացվող հողային աշխատանքների ժամանակ իրականացնել ջրցան,
- շինանյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով,
- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

### **7.2.2. Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում**

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն ըստ արտադրող ընկերությունների հրահանգների:

Շինարարության փուլում աղմուկի աղբյուր են հադիսանալու շինարարական տեխնիկան և անտոտրանսպորտային միջոցները: Ներկայացվածներից առավել բարձր է էքսյավատորի և բուլդոզերի ցուցանիշները՝ 85 – 95 դԲա:

Ըստ գրականության տվյալների<sup>3</sup> (энциклопедия по машиностроению стр.445) աղմուկի մակարդակի նվազումը տարածությունում վրա կազմում է 1 – 10 դԲա 100 մետրի վրա: Հաշվի առնելով հեռավորությունը մինչև մոտակա բնակավայր՝ 3 000 մ, ներկայացված գործունեության ընթացքում առաջացող աղմուկը չի կարող որևէ ազդեցություն ունենալ բնակավայրի վրա:

<sup>3</sup> Г. Зиг. <http://mash-xxl.info/info/369105/>.

Շինարարական գործողությունների ընթացքում թրթռումների ազդեցություններ չեն սպասվում:

*Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝*

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում,

- բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի տներ) հեռավորությունը շինտարածքից:

### **7.2.3. Հողային ռեսուրսներ**

Հողային ռեսուրսների պահպանության հիմնական միջոցառումը՝ բերրի հողաշերտի պահպանումն է: Հողի բերրի շերտի կտրումը, տեղափոխումը, պահպանումը և օգտագործումը պետք է իրականացնել, առաջնորդվելով ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ կառավարության 82 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Նախատեսվում է հողամասի մի մասի երկարությամբ կազմակերպել բերրի հողի պահեստ՝ ծածկի տակ և շրջանցող առուներով:

Բերրի հողը ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով: Որպեսզի նվազագույնի հասցվի բերրի հողի հատկությունների կորուստը՝ պահպանման ընթացքում, յուրաքանչյուր տեղամասի աշխատանքների ավարտից այդ մասի բերրի հողը, առանց սպասելու ընդհանուր աշխատանքների ավարտին, անմիջապես կփռվի և կխնամվի:

Անմիջապես նախատեսվող տարածքում հողածածկը հողաբուսական շերտի ավազակավի, կավավազի լցնումով է: Շերտի հզորությունը 0.0-0.20մ է, համաձայն ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի 1 հողամասի տարածքի ինժինեռաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության եզրակացության: Հողածածկի շերտի ծավալը միջինը՝ 0.1 մետր հզորությամբ կառուցապատվող հողամասում գնահատվել է 900 մ<sup>3</sup>: Կառուցապատվող տարածքից հանվող հողաբուսական ծածկը կպահպանվի հատուկ միջոցառումներով և կօգտագործվի հողամասում նախատեսվող կանաչապատման աշխատանքներին:

*Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝*

- Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը,
- Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսել լայնակույտերով,
- քայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային նյութ վերաօգտագործել շինարարական այլ աշխատանքներում, կամ հանձնել վերամշակող կազմակերպություններին,
- մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողություններ իրականացնել մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությանները և հնարավոր ռիսկերը,
- շին.մեքենաների ոչ կարգավորված տեղաշարժի բացառում՝ կից տարածքների հողային ծածկույթի մակերեսի վրայով,
- թույլ տալ դրանց տեղաշարժումը միայն գոյություն ունեցող կամ նշանակված ժամանակավոր ճանապարհներով.
- շինարարական աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքի հարթեցում, բարեկարգում և վերականգնում խոտաբույսերի ցանքսով,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները շինադբից, բարեկարգել, վերականգնել, առաջացած թափոնները տեղափոխել Արագածավանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայրեր,
- շինարարական նյութերի և քայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով:

*Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝*

- շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման կամ տեղակայման արտոնագիր,
- բացառել բետոնի պատրաստումը շինհրապարակում և այն շինհրապարակ բերել պատրաստի վիճակում,
- շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

**7.2.5. Կենսաբազմազանություն**

«ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊԸ-ի գործունեության տարածքը գտնվում է Արագածավան բնակավայրի վարչական տարածքում, որտեղ առկա է մարդկային ազդեցությունը և բացակայում են բնական լանդշաֆտները: Տարածքում առկա թփային բուսականությունը կհատվի փոխարենը կտնկվեն պտղատու ծառեր՝ տանձենի, խնձորենի, ծիրանենի և որոնք կլինեն հարևանությամբ գտնվող ընկերությանը պատկանող պտղատու այգիներ շարունակություն:

Քանի որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արագածավան բնակավայրում, որտեղ առկա են կանաչ տարածքներ և պտղատու այգիներ, վերջիններիս պահպանության համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,

- շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում շարայություներով և սահմանափակ արագությամբ ( $\leq 30$  կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում առնվազն 30 րոպե պարբերականությամբ,

- արգելել ճանապարհներից դուրս տրանսպորտային միջոցների շարժը,

- շինհրապարակում խուսափել շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,

- բոլոր աշխատողները պետք է հատուկ հրահանգավորվեն բնական միջավայրերում աշխատելու կանոնների մասին:

#### **7.2.5. Սոցիալական միջոցառումներ**

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,

- շինհրապարակը ցանկապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,

- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,

- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ

- շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

#### **7.2.6. Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Շին.աշխատանքների ընթացքում կառաջանա շինարարական աղբ և կենցաղային թափոններ:

Ըստ նախնական գնահատման շինարարական աղբի ծավալը սպասվում է մոտավորապես 75 մ<sup>3</sup>:

Հողային աշխատանքների ծավալները ներկայացնում են՝ հանույթ – 420մ<sup>3</sup>, հետլիցք – 80 մ<sup>3</sup>, մնացորդային հողային զանգված - 340 մ<sup>3</sup>:

Շինարարական աղբը (հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային գրունտի և շինաղբի ծավալները ժամանակավոր կուտակվելու են շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև պարբերաբար տեղափոխվելու և տեղադրվելու են Արագածավանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայրում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները /ընդհանուր 75խ/մ ծավալով/ տեղափոխվելու է Թալինի համայնքապետարանի կողմից թույլատրված, տարածքում թափոնների գործող աղբավայր:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ շինարարության ընթացքում առաջացող թափոնները ներկայացված են՝

- շինարարական աղբով, (քանի որ ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ. N430-Ն հրամանով հաստատված «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկ»-ում և ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ. N342-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկ»-ում ուղղակի շինարարական աղբ դասակարգում չկա, առավել մոտ է՝ 9120060101004 ծածկագրի՝ /վտանգավորության 4-րդ դաս/ անվանումը ըստ հավելվածի՝ շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ տեսակը),

- «Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) թափոնատեսակը հանդիսանում է 5-րդ դասի թափոն:

Գործունեության ընթացքում կենցաղային աղբը կհավաքվի կենցաղային աղբի համար նախատեսված աղբամաններում և կանոնավոր կերպով կհեռացվի շինարարական հրապարակից: Իսկ շին աշխատանքների ընթացքում առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ և փայտանյութ) կտեսակավորվեն և կպահվեն հրապարակում նախատեսված վայրերում՝ շինարարի կողմից հետագա օգտագործման նպատակով:

Կենցաղային աղբ, ըստ վերը բերված հրամանի՝ 9120040001004 «Կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)», վտանգավորության 4-րդ դաս, քանակը 15 մ<sup>3</sup>:

Սառնարանային տնտեսության շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների քանակը, տեսակները /որոնք կարող են ներառել՝ պահման համար ոչ պիտանի մրգեր, թղթից կամ պլաստիկ տարաներ և այլ պարագաներ/ և դրանց հեռացման վայրերը կամ այլ նպատակով օգտագործումը կճշտվեն սառնարանի շահագործման ընթացքում, քանի որ դրանց վերջնական քանակները պայմանավորված են սառնարանում պահեստավորվող մրգի տեսակից և քանակից:

### **7.2.7. Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:

- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:

- Ապահովել շին.հրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ և կենցաղային պայմաններ /լվացարան, զուգարան/:

- Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:

- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:

- Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:

- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:

- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)

- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարակից տարածքների հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա:

- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

### **Հակահրդեհային միջոցառումներ**

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝

- մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ

թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

### **7.3. Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմացումը շահագործման փուլում**

Սառնարանային տնտեսության շահագործման փուլում սպասարկող անձնակազմի և աշխատողների կոմունալ կենցաղային պայմանների ապահովման համար կկառուցվի սանհանգույցներ, ցնցուղարան, հանդերձարան, ճաշարան, հանգստի սենյակ, ինչպես նաև տեղադրված է ջրատաքացուցիչներ տաք ջուրը ապահովելու համար: Անձնակազմի և աշխատողների կոմունալ կենցաղային պայմանների ապահովման համար կառուցված սենյակներում ջեռուցումն ապահովվելու է էլեկտրական տաքացուցիչների միջոցով:

Սառնարանային տնտեսության շահագործման փուլում աշխատողների կենցաղային կարիքների համար կօգտագործվի բերովի ջուր, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին պատկանող ջրամատակարարման ցանցից՝ համապատասխան պայմանագրով, կամ առևտրային կետերից:

Սառնարանի խմելու տնտեսական ջրամատակարարումն իրականացվում է բերովի ջրի պահեստավորմամբ: Տնտեսությունը ապահովված կլինի խմելու-տնտեսական ջրամատակարարման և ներքին՝ կենցաղային կեղտաջրերի կոյուղու համակարգերով: Կոյուղու համակարգը նախատեսված է սանիտարատեխնիկական սարքերից տնտեսա-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Շենքի կեղտաջրերի հեռացումը ինքնահոս կատարվում է բակային ցանց, որտեղից կոյուղու սեպտիկ հոր:

Ռոզման նպատակով տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով, կամ կապահովվի սառնարանային տնտեսության



հարևանությամբ Ընկերությանը պատկանող կաթիլային ոռոգման համար կառուցված հորերից:

Սառնարանային տնտեսությունում պահեստների հատակների սանիտարական լվացման աշխատանքները կկատարվեն հատուկ լվացման ավտոմատ մեքենաներով՝ բացառելով ջրահեռացումը դեպի կոյուղու համակարգ:

Սառնարանային տնտեսության շահագործման փուլում՝ անձրևաջրերը տարածքից կազմակերպված ձևով կհեռացվեն 50 խմ ծավալով ավազանում՝ ամենացածր կետում, որտեղ ինքնահոս կհավաքվեն, հետագայում տարածքների ոռոգման նպատակով օգտագործելու համար:

Մշտական էլեկտրամատակարարման առկայության միջոցառումները և սառնարանային սարքավորման անխափան աշխատանքն ապահովելու համար, սառնարանային տնտեսության շահագործման փուլի համար ՀԷՑ ՓԲԸ-ի հետ կկնքվի էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր:

Տրանսֆորմատորային ենթակայանում էլեկտրաէներգիայի անջատման դեպքում որոշ բեռների համար նախատեսված է լրացուցիչ տեղադրել դիզել գեներատոր:

Էլեկտրաանվտանգության ապահովման հիմնական միջոց օգտագործվելու է պաշտպանիչ հողանցման համակարգը: Որպես հողանցման PE հիմնական հաղորդաձող հանդիսանում է 40 x 5մմ պողպատե հաղորդաձողը:

Սառնարանային տնտեսությունում շահագործման փուլում ստեղծվելու է թվով 8 աշխատատեղ, ինչպես նաև օգտագործվելու է թվով 3 մեքենա-մեխանիզմներ՝ ինքնագնաց բեռնիչ, ինքնագնաց եղանային ամբարձիչ էլ. ամբարձիչ:

Սառնարանային տնտեսությունում հիմնականում պահվում է ընկերության կողմից աճեցված մրգերը: Շահագործման արդյունքում սննդային թափոններ չեն առաջանա, քանի որ Սառնարանային տնտեսությունում պահվող մրգերի տեսակավորումից հետո, սառնարանում չպահպանվող մրգերը, որոնք չեն ապահովի ապրանքային տեսք, տեղափոխվելու են Արագածավան համայնքում առկա մրգերի վերամշակման արտադրամաս: Սառնարանում մրգերի ճիշտ պահման պայմանների ապահովման արդյունում հնարավորինս կբացառվի օգտագործման համար ոչ պիտանի կամ որակազրկված մրգային թափոնների առաջացումը: Իսկ առաջանալու դեպքում ընկերությունը այն կարող է տրամադրել մրգային պյուրեի, մրգային օղիների, լավաշի, խնձորի չիպսի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների, որոնք կարող է վերամշակել և ստանալ նշված ապրանքատեսակներից որևէ մեկը:

#### 7.4. Հանրային մասնակցություն

Նախագծման փուլում «ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊ ընկերությունը գործունեության տարածքում ուսումնասիրություններ և հանրային լսում է անցկացրել հիմնական ելակետային տվյալներ ձեռք բերելու, ինչպես նաև ծրագրի սոցիալական ազդեցությունը գնահատելու նպատակով: Հանրային լսման նպատակն է եղել իրազեկել ազդակիր համայնքին/բնակավայրին նախագծի վերաբերյալ, ներկայացնել

նախագծային լուծումները և նախագծին առնչվող հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցություններն ու դրանց մեղմացնող միջոցառումներն, ինչպես նաև տեղեկություն տրամադրելու արդյունքում իմանալ համայնքների մտահոգությունները և կարծիքները՝ նախագծման փաստաթղթերը ավարտին հասցնելու ժամանակ դրանք հաշվի առնելու նպատակով:

ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային լսումը կազմակերպվել է 2024թ-ի մարտի 22-ին Թալին համայնքի Արագածավան բնակավայրում, որի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթում 2024թ-ի մարտի 14-ի համարում:

## **8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

Շրջակա տարածքների և գործունեության հնարավոր ազդեցությունը մոտակա բնակչության վրա հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ և կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ)՝ նախատեսված սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը: ԲԿՊ-ն ներկայացված է Հավելված 1-ում:

## **9. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ**

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի գործողությունները ներկայացված են Հավելված 2-ում՝ Մոնիթորինգի մշտադիտարկման պլանում: Շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումը թույլ է տալիս գնահատել և կանխատեսել շրջակա միջավայրի իրավիճակի փոփոխությունները և կանխարգելել և կանխել ազդակիր բնակավայրի

բնակչության և շինարարության փուլում աշխատողների վրա անվտանգության և առողջության ապահովման հետ կապված հնարավոր ռիսկերը:

Մշտադիտարկումը իրականացվում է շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ՝ մակերևույթային ջրեր, մթնոլորտային օդ, հող, կենսաբազմազանություն, սոցիալական միջավայր: Սառնարանային տնտեսության կառուցման ընթացքում մշտադիտարկման ծրագրով նախատեսվում է արտաքին զննման եղանակով դիտարկել հողաձածկը, կենսաբազմազանությունը, մակերևույթային ջրերը, մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիան և ֆիզիկական ազդեցությունների մակարդակը:

Շինհրապարակի համար առաջարկվող մոնիթորինգի միջոցառումները հետևյալն են՝

1. Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ՝ ամիսը երկու անգամ,
2. Շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
3. Կենսաբազմազանության մոնիթորինգ՝ շին/ժամանակահատվածում մեկ անգամ,
4. Տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
5. Աղմուկի և թրթռումների մակարդակի չափումներ:

Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝  $5 \text{ մգ/մ}^3$ , ազոտի երկօքսիդի համար՝  $0.2 \text{ մգ/մ}^3$ , մրի համար՝  $0.15 \text{ մգ/մ}^3$ :

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով, որը նախատեսվում է հողային աշխատանքների և շինարարության ժամանակ, տրամադրվելու է 200.0 հազ.դրամ:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին և հնարավորություն կստեղծի ունենալ տեղեկատվական հենք՝ հսկելու ընկերության գործունեության հետագա շարունակական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Ներկայացվող գործունեությունը ներառում է հետևյալ փուլերը.

- Շինարարության փուլ
- Շահագործման փուլ
- Փակման փուլ

Շինարարության փուլում հիմնական ռիսկերը կապված են փոշու արտանետումների, աղմուկի մակարդակի և հողաձածկի վնասման հետ: Համապատասխանաբար մոնիթորինգի միջոցառումները պետք է ներառեն փոշու պարունակության, աղմուկի մակարդակի վերահսկողություն, կեղտաջրերի հավաքման հորի ժամանակին դատարկման վերահսկողություն, մերձակա տարածքների պարբերական այցեր, պարզելու համար հողաձածկի, բուսածածկի և կենդանական աշխարհի փոփոխությունները:

Շահագործման փուլում գործնականում ազդեցություն չի լինի: Պետք է իրականացվի սառնարանային տնտեսության աշխատանքի վերահսկողություն և առաջացող տարբեր տեսակի թափոնների /սառնարանում պահման համար ոչ պիտանի մրգեր, թղթից կամ պլաստիկ տարաներ/ պատշաճ հեռացում:

Փակման վերաբերյալ որևէ քննարկումներ դեռևս չկան, ընկերությունը նախատեսում է զարգացնել և խթանել այգեգործական տնտեսության աճը հանրապետությունում:

Մոնիթորինգի/մշտադիտարկման միջոցառումները և գործողությունները ներկայացված է պլանում:

## 10. ՓՈԽՎԱՏՈՒՑՈՒՄ

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է սառնարանային տնտեսության շրջակայքում իրականացնել բարեկարգման, ասֆալտապատման աշխատանքներ: Ավտոճանապարհների, հրապարակների, մայթերի կառուցապատման համար կօգտագործվեն Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողատարածքները: Կանաչապատումը ներառում է սիզամարգի տեսքով աշխատանքներ և դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու են տարածաշրջանի բուսականությանը համապատասխան ծառեր և բուսատեսակներ:

Կանաչապատման մակերեսը կկազմի տարածքի 60.2 %-ը, ինչը համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանք/ պահանջ է:

Ստորև բերված են բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը:

### *Բնապահպանական միջոցառումների արժեքները*

Մեղմացման միջոցառումը	Միավորը	Ծավալը/ Ցուցանիշը	Գումարային արժեքը, հազ. ՀՀ դրամ	Ժամանակացույցը
Տարածքների ջրցանում	ք.մ	9645	450000	Շինարարության փուլ
Կառուցապատվող տարածքից հանվող բուսահողի պահպանության միջոցառումներ Տարածքում խախտված տարածքների կենսաբանական վերականգնում բուսահողով	ք.մ	Կառուցապատվող 9645 մ <sup>2</sup> մակերեսում 900 մ <sup>3</sup> խմ ծավալով բուսաշերտ	1300000	Շինարարության փուլ

Շին աղբի և մնացորդային գրունտի տեղափոխում համապատասխան թափոնավայր	խ.մ տոննա	75 մ <sup>3</sup> Հողային աշխատանքների առաջացող մնացորդային քանակ՝ 340 մ <sup>3</sup>	500000 1000000	շինարարության փուլ
Կենսաբազմազանության պահպանության և մշտադիտարկման գործողություններ)	1 անգամ		200000	Շինարարության փուլ
Բազմամյա խոտաբույսերի ցանքս (սերմը 1ք.մ- 0.035 կգ)	ք.մ	1000 քմ	250000	Կանաչապատում՝ սիզամարգի ձևով տարածքներում
Մշտադիտարկումներ /աղմուկ, հողային ծածկույթ, մթնոլորտային օդ			200.000	Շինարարության փուլ
<b>Ընդամենը՝ հազ. ՀՀ դրամ</b>				3900000

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք ՀՕ-150 խմբ. 2023թ.
- «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2024 նորմատիվային փաստաթուղթ
- ՀՀ Կառավարության 2023 թվականի 28 դեկտեմբերի N 2343-Ն որոշում:
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
  - Հայաստանի Ազգային Ատլաս, Երևան, 2007:
  - Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
  - Տեղեկագիր: ՀՀ շրջակա միջավայրի մասին: Երևան: 2023թ.: <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Annual-19.pdf>
  - «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք
  - «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք
  - «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)
  - «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)

- ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն որոշում:

**Հավելված 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

Ծրագրի Գործողությունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխանատուն	Մոնիթորինգի պատասխանատուն
<p>Նախագծային փաստաթղթերի պատրաստում</p> <p>Շինարարական Հրապարակի Բոլոր գործողությունները</p> <p>Աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն</p>	<p>Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,</p> <p>ԲԿՊ-ի բնապահպանական Պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:</p>	<p>Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերում</li> <li>- Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների օգտագործման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում:</li> </ul> <p>- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային կարգապահությունը</p> <ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</li> <li>- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</li> <li>- Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ նվազագույնի հասցնելով ազդեցությունը շրջակա տարածքների վրա:</li> <li>- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</li> <li>- Շինհրապարակում տեղադրվող համապատասխան</li> </ul>	<p>Շինարարության և կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող</p> <p>Թալինի համայնքապետարան</p>

		տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:		
Հողային աշխատանքներ, հողի բերրի շերտի վնասում	Հողային ծածկույթի վնասում	<ul style="list-style-type: none"> <li>- Շին մեքենաների ոչ կարգավորված տեղաշարժի բացառում կից տարածքների հողային ծածկույթի մակերեսի վրայով:</li> <li>- Թույլ տալ դրանց տեղաշարժումը միայն գոյություն ունեցող կամ նշանակված ժամանակավոր ճանապարհներով.</li> <li>- շինարարական աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքի հարթեցում, բարեկարգում և վերականգնում խտաբույսերի ցանքսով,</li> <li>- Բուսահողի հանումը, պահումը և հետագա օգտագործումն իրականացնելիս ապահովել ՀՀ կառավարության 02.11.2017թ. 1404-Ն և 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշումների պահանջների կատարումը,</li> <li>- աշխատանքների Բուսահողի ծածկում ջրադիմացկուն թաղանթով.</li> <li>- Պահեստավորված բուսահողի օգտագործում կանաչապատման աշխատանքների ժամանակ,</li> <li>- շինհրապարակում խուսափել շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,</li> </ul>	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող, Թային համայնքապետարան Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
Այլ շինարարական աշխատանքներ շինանյութերի փոխադրումներ	Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;	<ul style="list-style-type: none"> <li>- Օդի աղտոտման և փոշու կառավարում</li> <li>- Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում:</li> <li>- իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով;</li> <li>- նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար,</li> <li>- սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով;</li> <li>- շինարարական աշխատանքների ընթացքում հատուկ տարողություններ և աղբավայրեր նախատեսել տարբեր տեսակի շինարարական աղբի հեռացման համար,</li> <li>- աշխատանքների ընթացքում կառաջացող շինարարական թափոնները և աղբը անմիջապես տեղափոխել համապատասխան</li> </ul>		Կապալառու Համայնքապետարան



<p>Մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերում</p>		<p>թափոնավայրեր՝ ճառագացնելով կուտակումներ:  - շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում ահմանափակ արագությամբ (<math>\leq 30</math> կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում առնվազն 30 րոպե պարբերականությամբ,  &lt;&lt; կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի № 438 որոշման 43-րդ կետի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:</p>		
<p>Թափոնների կառավարում</p>	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;  Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p>	<p>- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:  - Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատկացված աղբավայր:  - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից  - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող, Թալինի համայնքապետարան</p>
<p>Աղմուկի թրթռումների կառավարում</p>	<p>և Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:</p>	<p>- Աշխատատեղերում աղմուկի մակարդակը պետք է համապատասխանի &lt;&lt; օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:  - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:  - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:</p>	<p>Շինարարության կապալառու</p>	
<p>Շինարարական աշխատանքների ընթացքում ազդեցություն</p>	<p>լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով</p>	<p>նվազեցնել ազդեցությունը բույսերի վրա՝ հողային աշխատանքների հիմնական մասը պլանավորելով և իրականացնելով վեգետացիոն ոչ ակտիվ ժամանակաշրջանում.</p>	<p>Շինարարության կապալառու</p>	

<p>կենսաբազմազանության վրա</p>		<p>շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար օգտագործել կանաչապատման տարածքներից հեռու տեղամաս,  - տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս արգելել,  - շինհրապարակում խուսափել շինարարական աղբի այրումից և կուտակումից,  - Տրանսպորտի տեղաշարժ բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով  -խախտված տարածքների կենսաբանական վերականգնում /հրականացնելով ցանքս/  -կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ,  - ՀՀ կառավարության 2014թ. Հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջների ապահովում  - աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ  - բացառել գիշերային ժամերին մեքենամեխանիզմների լուսավորությամբ կամ այլ լուսավորության կիրառմամբ աշխատանքները:</p>		
<p>Շինհրապարակի վերականգնում</p>		<p>- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն;  - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;  - Մաքրել շինհրապարակը աղբից  - Մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները;  - Կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքները  - Ձեռնարկել տնկված ծառերի, թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիթորինգը՝ բուսականության բարձր կաշտողականություն աճն ապահովելու համար</p>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Թալինի համայնքապետարան</p>

**Հավելված 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ**

Մշտադիտարկման վայրը	Մշտադիտարկման ցուցանիշը	Մշտադիտարկման եղանակը	Հաճախականությունը	Պատասխանատու կատարողը	Մշտադիտարկման արդյունքը
Նախատես-վող գործունեության տարածք	Սահմանների որոշում	Տեսողական զննում	Մինչ աշխատանքները սկսելը	Աշխղեկ	Տարածքը համապատասխան նշագրմամբ
	Գրունտի, ներառյալ բերրի շերտի, պատշաճ պահում	Տեսողական զննում	Հողային աշխատանքների ընթացքում	Աշխղեկ	Պատշաճ կերպով պահվող գրունտ և բերրի հողաշերտ
	Փոշու արտանետումներ	Գործիքային չափում	Ամիսը 2 անգամ	Մասնագիտացված կազմակերպություն	Չափման արձանագրություն
	Աղմուկի մակարդակի որոշում	Գործիքային չափում	Երկու անգամ	Մասնագիտացված կազմակերպություն	Չափման արձանագրություն
	Շահագործվող տեխնիկայի տեխնիկական վիճակի ստուգում	Տեսողական զննում	Օրական, մինչ աշխատանքների սկիզբը	Աշխղեկ	Անթերի աշխատող տեխնիկա
	Անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցների առկայություն և կիրառում	Տեսողական զննում	Օրական, մինչ աշխատանքների սկիզբը և ընթացքում	Աշխղեկ	
	Հակահրդեհային և առաջնային հրդեհաշիջման միջոցների առկայություն	Տեսողական զննում	Օրական, մինչ աշխատանքների սկիզբը և ընթացքում	Աշխղեկ	
	Գոյացող շինարարական թափոնների հեռացում և տեղադրում	Տեսողական զննում	Աշխատանքների վերջում	Աշխղեկ	Տեղադրված թափոններ
	Կանաչապատված տարածքների և հարակից տարածքի կենսաբազմազանության մշտադիտարկում	Տեսողական զննում Ապահովել կառավարման պլանով սահմանված բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցության մեղմացնող միջոցառումները	Աշխատանքների վերջում և հետագայում այցելությունների ընթացքում	Կենսաբազմազանության մասնագետ,	

Շինհրապարակի մշտադիտարկումը կազմակերպվում է համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

### Հավելված 3. Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2023-06-19

#### «ՎՈ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 56.110.1043518

Հիմնադրման տարի 2018

Գրանցման ամսաթիվ 2018-10-30

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 51309404

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 05024053

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովարդի ծածկագիր) 01113518

Էլ. փոստ edsisakyan@gmail.com

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե Գ. ՀՈՎԱՆՓՅԱՆ Փ. / 20 շ. ՆՈՐՔ-ՄԱՐԱՀ 0047  
ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս --

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տեղապահ

Անուն Ազգանուն ԷԴԳԱՐ ՄԻՍԱԿՅԱՆ ԳԵՂԱՄԻ

Անձնագրային տվյալներ AR0339608 2017-06-22 001

Հասցե ՏԵՐՅԱՆ 2 ՆՐԲ. / Տ / 4 ԹԱԼԻՆ 0501 ԹԱԼԻՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՅԱՍՏԱՆ

# Հավելված 4. Ճարտարապետահատակագծային առաջադրանք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՀՀ ԱՐԿԻՏԵԿՏՆԱԿԱՆ ԳՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**  
(մարզը, համայնքը)

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՑԵԼՏՎՈՒԹՅՈՒՆ**

**(ԿԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆԱԿԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՐԱԹ)**

N 37 14. 06. 2023թ.

Օրինկտ Մատնարանի Կառուցում  
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

\_\_\_\_\_ (նակիրճ բնորոշումը, եզրագրերը)

\_\_\_\_\_ նախագծային փաստաթղթերի մշակման համար:

\_\_\_\_\_ (4-րդ կատեգորիա)

\_\_\_\_\_ (նյութակազմի աստիճանը (կատեգորիան), նախագիծն փոփոխելու և այլն)

Գտնվելու վայրը Թալին համայնք, Գ. Արագածավան, 1 հողամաս, ծածկագիր 02-016-0250-0048  
(մարզի, համայնքի, վտորցի անվանումները, շենքի համարը, հարամասի ծածկագիրը)

Կառուցապատող «ՎՈՒ ԱՐԿԻՏԵԿՆԱԿ» ՖԸՈՒԹ» ԱՊԸ, 56.110.1043518, ք. Երևան,  
Գ. Հովսեփյան փողոց 20, հեռ. 094-96-00-46  
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի տեղեց, սպգանունը)

\_\_\_\_\_ (բնակարանի վայրը, ենթախտահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը կառուցապատողի 14.06.2023թ. N 056/4252 հայտը, օրինկտի էսքիզը,  
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված  
0400502023թ. տրված N 04052023-02-0064 սեփականության իրավունքի վկայականը, Համայնքի ավագանու  
31005, 2023թ. N 71-Ա որոշումը և Համայնքի ղեկավարի 08006, 2023թ. N 660-Ա որոշումը  
կարգով հարամասի տրամադրման, սեշարժ գույքի փոփոխման իրավունքը հատուտապես անկամեղա փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը \_\_\_\_\_  
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

**ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**  
*(ատողանկիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է Թալին համայնք, Գ. Արագածավան 1 հողամաս հասցե  
Արդյունաբերական, բնօրոգոցտագործման և այլ արտադրական,  
գյուղատնտեսական, գյուղատնտեսական արտադրական,  
վարելահող, այլ հողատեսակ  
(հողամասի դիրքը բաղադրչինական միջավայրում, դրա նպատակային և

2. (\*) Հողամասի չափերը

4,20988 հա  
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշանաբանով, մակերեսը (հա))

3. Հողամասի ասկա վիճակը

չկառուցապատված տարածք  
(տեխնիկի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդան նեթակա) ասկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական կուրսերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (\*) Տրանսպորտային պայմանները

Եւաշտամիջրան ճանապարհ  
(ճանապարհների ասկայությունը, երկաթուղային տրանսպորտի մատչումները և այլն)

5. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

Հողամասին կից ստվա ևն էլեկտրահաղորդման գծեր, (նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող լինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (\*) Կից հողամասեր

Մասնավոր և համայնքային սեփականություններ  
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

չկա  
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (\*) Հատակագծային սահմանափակումներ

չկա  
(տեղակայում գործող այրատարական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Համաձայն էսքիզ արտացարկի  
(եղևիլով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ասկա բաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) բաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (\*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Ըստ պահանջվող նորմերի

9.2. (\*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

Ըստ պահանջվող նորմերի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)	Ըստ պահանջվող նորմերի
9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)	0.25
9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))	39.8%
9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))	60.2%
9.7. այլ պահանջներ	Հիմք ընդունել համապատասխան իրավական նորմերի պահանջները
10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը	չկա
11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	ըստ պահանջվող նորմերի
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում	Կցվում է <u>Համաձայն տեխնիկական պայմանների</u> (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	Կցվում է <u>Համաձայն տեխնիկական պայմանների</u> (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	Կցվում է <u>Համաձայն տեխնիկական պայմանների</u> (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության սնուցման տար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	Կցվում է <u>Համաձայն տեխնիկական պայմանների</u> (համաձայն N 1 համախմբի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.5. թույլ հոսանքներ	չկա
12.6. աղբահանություն	Պայմանագրային

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

\_\_\_\_\_ Ըստ պահանջվող նորմերի \_\_\_\_\_  
(տեխնիկի կազմակերպման, քրահետազոտման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

\_\_\_\_\_ Տարածքի բարեկարգում \_\_\_\_\_  
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական վտրը ձևեր, ցանկապատում, գոլաօդ և այլն)

15. Երևարարական նյութեր

\_\_\_\_\_ Տեղական շին. նյութեր \_\_\_\_\_

16. Պաշտպանական կառույցներ

\_\_\_\_\_ Ըստ պահանջվող նորմերի \_\_\_\_\_  
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

\_\_\_\_\_ Ըստ պահանջվող նորմերի \_\_\_\_\_  
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

\_\_\_\_\_ չկա \_\_\_\_\_

19. Երջակա միջավայրի պահպանում

\_\_\_\_\_ Ըստ պահանջվող նորմերի \_\_\_\_\_  
(ըջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Երևարարության կազմակերպում

\_\_\_\_\_ Եին հրապարակի կազմակերպման նախագիծ \_\_\_\_\_  
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տեսանկյունից և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

\_\_\_\_\_ 1(մեկ) տարի \_\_\_\_\_  
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

22. Նախագծային փաստաթղթերի փորձարկությանը ներկայացվող պահանջներ

\_\_\_\_\_ պետական համալիր փորձարկություն՝ ներառյալ օրենքով սահմանված պետական լիազորված մարմինների փորձարկությունները կամ մասնագիտական եզրակացությունները \_\_\_\_\_  
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձարկության տեսակը կամ նախագծողի երաշխավորագրվել՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

\_\_\_\_\_ Օրենքով սահմանված կարգով \_\_\_\_\_  
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էքզիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փովտիման ենարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

\_\_\_\_\_ չկա \_\_\_\_\_  
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)



25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

Օրենքով սահմանված կարգով

(ընվում են տվյալ օրյելքի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները հուշարձանների օբյեկտի պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

չկա

27. Այլ պայմաններ

չկա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ



ՄԵՐԳԵ ՄԿՐՏՅԱՆ

## Հավելված 5. Անշարժ գույքի պետական գրանցման վկայական



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐՃ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՑՄԱՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի  
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 21 հունիսի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### **1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

«ՎՈ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊԸ

### **2. ԱՆՇԱՐՃ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Արարդ Արագածոտն, համայնք Թալին գյուղ Արագածավան 1 հողամաս

### **3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Առուվաճառքի պայմանագիր՝ 22.09.2022թ 2107, Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում անշարժ գույքի ներդրման պայմանագիր՝ 27.04.2023թ. գ/մ 4015 , Համայնքի ավագանու որոշում 31.05.2023թ. թիվ 71-Ա , Համայնքի ղեկավարի 07.06.2023թ. թիվ 656-Ա որոշում, Ճարտարապետահատակագծային առաջադրանք թիվ 37 14.06.2023թ., Հասցե տրամադրելու մասին որոշում (որոշման քաղվածք) 09.06.2023թ. թիվ 676-Ա

### **4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 02-016-0250-0048

Մակերեսի չափը (հա)՝ 4.209857

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Վարելահող, Այլ հողատեսք.

Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 21062023-02-0087, գաղտնաբառ՝ BRLMNS2TNLAV**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
[www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

Էջ 1/2

**5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

4.209857 հա հողամասից 1.394064 հա գյուղատնտեսական վարելահող է, 0.926503 հա՝ գյուղ. այլ հողատեսք, 1.889290 հա՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՎԱԼԵՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ


Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎՎԱՅԱԿԱՆ N 21062023-02-0087, գաղտնաբառ՝ BRLMNS2TNLAV**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կադող է արտաբերել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով



### Հավելված 6. Հողամասի հատակագիծ



Հողամասի			
Գնահատման կատարող (անուն)	Տարրեր/աստիճան		Գնային արժեքը (ձ)
	X	Y	
Դ	8382929.8850	4488668.3310	71.25
Ե	8382961.2640	4488604.3680	6.76
Զ	8382964.6339	4488598.4516	67.51
Ծ	8382900.2650	4488577.7697	27.61
Պ	8382900.3452	4488551.6993	13.37
Պ	8382897.1607	4488546.1514	26.30
Ղ	8382871.3684	4488541.1067	17.07
Ճ	8382854.8582	4488536.7527	13.43
Կ	8382800.5906	4488524.6085	22.24
Կ	8382878.5717	4488511.5289	18.84
Կ	8382897.4027	4488511.0807	197.29
Կ	8382710.6739	4488447.4044	

Այլ թվում / Գնահատման համարներ/ արտակարգական օրինակներ/ -1.88929 հա			
Գնահատման կատարող (անուն)	Կտրույթներ		Գնային արժեքը (ձ)
	X	Y	
1	8382712.1102	4488500.5991	114.86
2	8382689.5749	4488613.0222	19.46
3	8382673.8883	4488624.5385	3.10
4	8382674.3580	4488621.4743	4.73
5	8382689.6790	4488620.7570	0.71
6	8382689.7866	4488620.0552	0.90
7	8382688.6870	4488619.9189	0.71
8	8382688.7838	4488620.6198	6.58
9	8382662.2780	4488619.6224	3.10
10	8382661.8082	4488622.6867	9.77
11	8382652.1511	4488621.2062	2.91
12	8382651.2121	4488623.9521	7.29
13	8382646.6502	4488630.7862	205.50
14	8382651.7781	4488651.9260	53.35
15	8382820.2044	4488618.9189	100.57
16	8382835.4444	4488519.5063	124.78
1	8382712.1102	4488500.5991	

այլ թվում / Կտրույթներ/ - 1.394064 հա			
Գնահատման կատարող (անուն)	Կտրույթներ		Գնային արժեքը (ձ)
	X	Y	
1	8382710.6739	4488447.4044	88.11
2	8382682.6814	4488531.0175	95.28
3	8382652.1511	4488621.2062	9.77
4	8382661.8082	4488622.6867	3.10
5	8382662.2780	4488619.6224	6.58
6	8382688.7838	4488620.6198	0.71
7	8382668.8070	4488619.9189	0.90
8	8382669.7866	4488620.0552	0.71
9	8382689.6790	4488620.7570	4.73
10	8382674.3580	4488621.4743	3.10
11	8382673.8883	4488624.5385	19.46
12	8382689.5748	4488613.0222	114.86
13	8382712.1102	4488500.5991	124.78
14	8382835.4444	4488519.5063	400.57
15	8382620.2044	4488618.9189	43.62
16	8382646.6502	4488654.0798	37.25
17	8382835.1678	4488618.4410	35.80
18	8382837.5292	4488582.7224	15.54
19	8382852.3355	4488577.9988	47.93
20	8382900.2650	4488577.7697	27.61
21	8382905.3452	4488551.6993	13.37
22	8382897.1607	4488546.1514	23.35
23	8382884.8582	4488536.7527	13.43
24	8382860.5906	4488524.6085	22.24
25	8382878.5717	4488511.5289	18.84
26	8382897.4027	4488511.0807	197.29
1	8382710.6739	4488447.4044	

այլ թվում / Այլ հողատեսք / - 0.926503 հա			
Գնահատման կատարող (անուն)	Կտրույթներ		Գնային արժեքը (ձ)
	X	Y	
1	8382900.2650	4488577.7697	47.93
2	8382852.3355	4488577.9988	15.64
3	8382837.5292	4488582.7224	35.80
4	8382835.1678	4488618.4410	37.25
5	8382846.0178	4488654.0798	9.73
6	8382851.7779	4488661.9259	69.68
7	8382920.6512	4488672.4842	10.12
8	8382929.8850	4488668.3310	78.00
9	8382964.5339	4488508.4516	67.51
1	8382900.2650	4488577.7697	

Մրավարժրում ունեցող անձ		Նոյարյր Կազարյան
Մրավարժրման վճարվածի համարը		0287
Աստղագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		ԿՐԳՈՒՆԵՐՈՒ ՍՊԸ
ԳԿԳԳ		07623126
Աստղագրություն		
անձնական	չափագրության	07.05.2023
անձնական	կատարման	14.05.2023

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ  
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

Հասցե՝ 0054, Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8,  
Էլ. փոստ՝ utfsib@utfsib.gov.am, հեռախոսահամար՝ (+374 60) 86 66 66  
№ՔՏՄ/95.21/22720-23\_09\_\_10\_\_\_\_\_2023\_թ.

**«ՎՌ ԱՐՄԵՆԻԱՆ ՖՐՈՒԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՏՆՕՐԵՆ ԷԴԳԱՐ ՍԻՍԱԿՅԱՆԻՆ**

ք.Երևան, Գ.Հովսեփյան 20  
Էլ. փոստ՝ y.ghazaryan.j17@gmail.com

**Հարգելի պարոն Սիսակյան**

Ի պատասխան Ձեր 04.09.2023թ. դիմումի՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) քննարկել է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան գյուղի 1 հողամաս հասցեում նախատեսվող սառնարանային պահեստային շենքի ճարտարապետական և ինժեներական նախագծերը, և տեղեկացնում է, որ դրանք համապատասխանում են հրդեհային անվտանգության պահանջներին:

Տեղեկացնում եմ նաև, որ Տեսչական մարմինը նախագծի վերաբերյալ քաղաքաշինական մասով դիտողություններ չունի:

Միաժամանակ, Ձեզ անհրաժեշտ է արտաքին ցանցերի նախագիծը մշակելիս նախատեսել հրշեջ հիդրանտ (շենքից 200մ շառավղով բացակայության դեպքում):

Սույն գրությունը վավեր է նախագծում համապատասխան դրոշմակնիքի առկայության դեպքում:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ**

**X**

**ԱՐԱՋ ՊԱՊԻԿՅԱՆ**

Կատարող՝ Անդրանիկ Յազեբյան  
Ստորաբաժանում՝ Տ և ՀԱ վարչություն, ՆՏՓՎ բաժին  
Հեռ.՝

Կատարող՝  
Ստորաբաժանում՝  
Հեռ.՝  
060 86 66 66 (10-43)  
Արտաշես Սարգսյան  
ՔԳՎ վարչություն  
060 86 66 66 (10-60)



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

ՀՀ, ք. Երևան, Ա. Արմենակյան փող. 127

№ ՏՊ- 151 - 6(10)/0048

«14» 02 2024թ.

## ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

/Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 523-Ն որոշման Գլուխ 27-ի 179 կետի 2-րդ ենթակետի/

Տրվում է	«ՎՌ Արմենիա Ֆրոյթ» ՍՊԸ տնօրեն Է.Սիսակյանին
Պատճենը	«Մուսայեռ» մ/ճ-ի գլխավոր ճարտարագետ Ա. Ավագյանին
Սպառողի հասցեն	Մարզ Արագածոտն, համայնք Թալին գյուղ Արագածավան 1 հողամաս /կադ. ծածկագիր՝ 02-016-0250-0048/ Հիմնական սնուցում
Սնուցման տեսակը	3000
Պահանջվող հզորությունը (կՎԱ)	10
Սնման կետի լարումը (կՎ)	

- Տարածքի էլեկտրամատակարարման իրականացման նպատակով, վերը նշված հասցեում տեղադրել 3x1000 կՎԱ հզորության 10/0.4 կՎ ենթակայաններ (ԳՕՍՏ-11920-85, ԳՕՍՏ-14695-80):
- Ենթակայանների սնումն իրականացնել «Պեոլիտ» 110/10 կՎ ե/կ-ի 10 կՎ ԲՍ-ից առանձին բջիջով, նախապես տեղադրելով 10 կՎ բջիջ և կառուցելով 10 կՎ օղային գիծ մոտ 5500մ:
- Հաշվառքի սարքերի տեղադրման կետը՝** «Պեոլիտ» 110/10 կՎ ե/կ-ի 10 կՎ ԲՍ-ի նոր տեղադրված բջիջում, տեղադրել և օրինականացնել հաշվառքի սարքեր (տեղակայել հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորներ, բացառությամբ էլեկտրոնային առևտրային հաշվիչի, այն տեղադրվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից):
- Էլ.մատակարարման նախագիծը՝ նախապես համաձայնեցնել** «Մուսայեռ» մասնաճյուղի գլխավոր ճարտարագետի, «ՀԷՑ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրենի և համապատասխան այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:
- Սնուցումը կիրականացվի՝** քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված գործարկման եզրակացության, «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրված լարման կարգադրության և մասնաճյուղի հետ կնքած էլ. էներգիայի մատակարարման պայմանագրի առկայության դեպքում:
- «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից 09.11.2023թ. տրված N ՏՊ-151-6(10)/0528 տեխնիկական պայմանները համաբեղ անվավեր:**

- Տեխնիկական պայմանների կարգարման ժամկետը 1 (մեկ) օրսր է:
- Տեխնիկական պայմաններով նշված աշխատանքները իրականացնել համաձայն նախագծի, իրենցավորված կազմակերպության միջոցով:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ

ՄԱՐԶ ԱՐԱԳԱԾՈՒՆ  
ԹԱԼԻՆ  
Պ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

